Ճանաչի՛ր ինքդ քեզ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 28.01.2015թ. չորեքշաբթի թիվ 3-4 (664-665)

Ծնորհավո՛ր տոնդ, Հա՛յ զինվոր

Բանակ եւ Ոսկեդար

Բանակ երեւույթը, թվում է, թե որեւէ կապ չունի **բանականություն** հասկացության հետ: Վերջինս **բան** արմատից է կազմված, *բան+ական=բանական* (այսինքն՝ *մտածող*) եւ սրանից էլ՝ *բանականություն (միտք, գիտակցություն):* Բայց, արի ու տես, որ հայերենը մի գեղեցիկ լեզվախաղով *բանակը* դարձնում է *բան+ակ, միտք+անիվ,* ***շարժվող միտք****:* Ահա ինչու մեր *բանակը* մեր պատմության մեջ հաճախ փոխարինվել է մեր *բանականությամբ*, մեր *մտքով,* մեր *հանճարով,* մեր *հոգեւոր արժեհամակարգով:* Նաեւ, ինչո՞ւ չէ, մեր *բանակն* էլ մարտի դաշտում միշտ հաղթել է, որովհետեւ առաջնորդվել է ոչ թե *քանակով,* այլ՝ *ռազմարվեստի ուժով, բանականությամբ:*

Իսկ ի՞նչ է **Ոսկեդարը:**

Ոսկեդարն այն է, երբ դառնում ես *լիարժեք ժամանակակից,* երբ ստեղծում ես *քո ժամանակների ամենահզոր բանական զենքերն ու արժեքները* կամ լավագույնս տիրապետում ես այդ զենքերին եւ արժեքներին՝ թեկուզեւ այլոց կողմից ստեղծված:

Մենք **ոսկե** պատվանունով որակեցինք մեր 5-րդ դարը: Թեեւ այն սկսվել էր 4-րդի սկզբից: Գուցե հենց առաջինի՞ց: **Քրիստոնեությունը,** ոչ միայն իբրեւ *համաշխարհային կրոն,* ոչ միայն որպես *հավատացյալի հոգու փրկության ձեւավորված համակարգ,* այլեւ որպես *համաշխարհային գաղափարախոսություն, մտածողություն, քաղաքակրթություն ու մշակույթ,* մեզ համար պետականորեն ընդունելի եղավ հենց սկզբից. հիշենք **Աբգար** թագավորի նամակը մեր **Տեր Հիսուս Քրիստոսին**՝ դեռ **Աստվածորդու** կենդանության օրոք: Հետո եկավ **301**-ը, ապա **406**-ը. ***քրիստոնեությունը*** դարձավ *պետական կրոն,* **Մեսրոպ Մաշտոցը** վերստեղծեց ***հայոց այբուբենը:*** Ընդհուպ մինչեւ 7-րդ դարավերջ ամբողջացավ մեր **Ոսկեդարը,** դարձավ մեզ համար հզոր ***քաղաքակրթական հիմք***՝ մեր ողջ հետագա ընթացքի համար: Եւ չուշացավ ***հունձքը:*** Այնքան առատ, որ մեզ մեկընդմիշտ դարձրեց ***համաշխարհային քաղաքակրթություն ստեղծող եւ կրող բացառիկ դասական ազգերից մեկը:***

Մեր ողջ պատմության ընթացքում, ամենատարբեր դարաշրջաններ բոլորելով, հերթական անգամ պետականություն ստեղծելով կամ վերականգնելով, որպես կանոն, մեզ եւ աշխարհին պարգեւել ենք մեր նոր *ոսկեդարը, զարթոնքը, վերածնունդը:*

Նոր ժամանակներում՝ 20-րդ դարասկզբին, ընդամենը երկու տարով վերականգնելով մեր անկախությունը՝ դարձյալ հսկայածավալ *գիտակրթական նախաձեռնություններ* կտակեցինք գալիք սերունդներին:

Մեր վերականգված հանրապետությունն արդեն 23 տարեկան է: Մեր օրերի Ոսկեդարի մասին կխոսեն տարիներ հետո: Բայց այն նախ պետք է ապրել: 21-րդ դարն անվանում են ***տեղեկատվական:*** Այսօր որեւէ երկրի զարգացածության աստիճանը բնութագրվում է հենց տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու նրա կարողություններով: Հազարամյակների մեր *փորձը* եւ մեր տեսակի *առանձնահատկությունները* մեզ թույլ են տալիս համակարգված արշավով «գրավել» *տեղեկատվական համակարգերի ողջ մեթոդաբանությունն ու զինանոցը* եւ լավագույնս տիրապետել ***ժամանակի բանական ամենահզոր զենքերին:*** Չի ուշանա նաեւ *նոր ժամանակների հունձքը:* Իսկ մեր ***նորագույն Ոսկեդարը*** կամբողջանա, երբ մենք կկարողանանք *ցանկացած պահի, երկրագնդի վրա ցանկացած կետից ստանալ ցանկացած տեղեկությունը:* Մեր ***նորագույն քաղաքակրթությունը*** կապահովի մեր ***անվտանգությունը***, *մեր* ***Նոր Հայրենիք – Հզոր Հայրենիքում,*** եւ մեր անվտանգությունը կդառնա բավարար պայման՝ ապահովելու մեր ***շարունակական քաղաքակրթական առաքելությունը*** երկրագնդի վրա:

Սուրբ Սարգիս

Սիրո մե՛ր հովանավորը

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին **Սուրբ Սարգիս** զորավարի տոնը այս տարի կնշի **հունվարի 31-ին**: Արդեն ավանդաբար, տարեցտարի ավելի ընդգրկուն ծրագրով, *Արարատյան Հայրապետական թեմը* կրկին հայ երիտասարդներին հրավիրում է մասնակցելու Սիրո մե՛ր հովանավորի տոնին՝ մայրաքաղաքի դիտարժան վայրերում, թանգարաններում, դպրոցներում, զորամասերում եւ այլ կրթամշակութային հաստատություններում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, մայրաքաղաքում եւ հանրապետության այլ բնակավայրերում Սուրբ Սարգսին նվիրված տոնախմբություններն անցկացվում են ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանի** բարձր հովանու ներքո:

տե՛ս՝ էջ 7

Տարեդարձի առթիվ

Խաղաղություն ենք պարտադրելու

ՀՀ Նախագահ, ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար **Սերժ Սարգսյանը** ՀՀ պաշտպանության նախարարության վարչական համալիրում մասնակցել է Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի եւ Հայկական բանակի կազմավորման 23-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստին:

Մինչ զեկույցներին անցնելը, նիստի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգել են հայրենիքի սահմաններն արիաբար պաշտպանելու ժամանակ զոհված մերօրյա հերոսների եւ արցախյան ազատամարտի տարիներին իրենց կյանքը զոհաբերած բոլոր զինծառայողների ու ազատամարտիկների հիշատակը:

Կոլեգիայի նիստում, որը նվիրված է եղել 2014թ. ուսումնական տարվա մարտական եւ զորահավաքային պատրաստականության, մարտական հերթապահության, զորքերի ու շտաբների օպերատիվ, մարտական պատրաստության արդյունքներին, զինվորական կարգապահության վիճակին, Նախագահ Սերժ Սարգսյանը հանդես է եկել բացման խոսքով:

տե՛ս՝ էջ 3

Եթե հայ ես, ուրեմն՝ զինվոր ես.
անկախ նրանից՝ սուր է ձեռքինդ, խաչ, բահ, թե գրիչ

Սուրբ Պատարագ եւ պարգեւաբաշխություն

Հայոց Բանակի կազմավորման 23-րդ տարեդարձի առթիվ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ **Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա** Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, Հայոց Բանակի կազմավորման 23-րդ տարեդարձի կապակցությամբ մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Գերաշնորհ **Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը**:

Արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը**, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ, գեներալ-գնդապետ **Յուրի Խաչատուրովը**, ԼՂՀ Պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ **Մովսես Հակոբյանը**, ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայական կազմը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ **Պերճ Սեդրակյանը**, Հայ Առաքելական Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարներ, զորամասերի հոգեւոր սպասավորներ եւ զինվորներ:

Վրթանես Սրբազանն իր քարոզում հանգամանորեն անդրադարձավ Բանակի օրվա խորհրդին: *«...Քրիստոնեությունն ընդունելուց ի վեր, երբ հայոց արքան, զորքն ու ամբողջ ազգը մկրտվեցին Արածանիի ակունքներում, հայ զինվորը մարտի էր գնում մկրտված, մեղքերի թողություն եւ Սուրբ Հաղորդություն ստացած՝ պատրաստ կռվելու մինչեւ վերջ եւ կյանքը զոհաբերելու հավատի, հայրենիքի եւ ազգի ապագայի համար: Աստված ազգերին կամք է շնորհ անում՝ ունենալու բանակ, պետականություն եւ եկեղեցի, եթե ազգերն իրենց գիտակցության մեջ ունենում են սրբության գաղափար: Նման ազգերին առիթ է ընձեռվում կերտելու նվիրական արժեքներ՝ համաձայն Աստվածային կամքի, ինչպես որ եղավ հայոց ժամանակակից բանակի կայացման պարագայում: Նվիրյալ հայորդիների ջանքերով, որ մարտնչում էին իբրեւ շարքային զինվոր ու աշխարհազոր, եւ Եկեղեցու օրհնությամբ՝ բազում կորուստներով ու անպատմելի հաղթանակներով կայացավ մեր բանակը, որն ամբողջ հայ ազգի համար դարձավ մի տեսակ տապան, որ փրկեց ու պաշտպանեց հայրենիքը պատերազմի արհավիրքներից ու նենգ թշնամուց:*

Նորաստեղծ բանակն Աստված վերօրհնեց հաղթանակներով: Բազում նվիրյալների արյամբ շաղախվեց վերածնունդի շաղախը, որը միավորեց հայությանը՝ Մայր Հայաստանում ու Արցախում: Նորաստեղծ մեր բանակը կանգնեց այդ հողի եւ վերջինիս արդար մշակի պաշտպանության դիրքերում, բազում մարտեր մղեց եւ ամեն անգամ մարտի դաշտից դուրս եկավ հաղթանակած՝ եռագույնն ու Տիրոջ խաչը վեր պարզած: Սա վկայություն էր համայն աշխարհին, որ հայ հողի համար պայքարողը հրեշտականման հայ զինվորն է, ով մարտի է բռնվում՝ լի առ Աստված հավատով եւ հայրենիքի հանդեպ տածած որդիական պարտքի խորը զգացումով: Հայրերից ժառանգած հավատը, ուժն ու կորովը, հայրենիքի հանդեպ ունենցած սերը շարունակում են արգելք լինել նահանջի ճամփին, արգելք՝ պարտության առաջ, պարտադրելով չլսված հաղթանակներ, որոնք պետք է իրենց արժանի տեղն ունենան ռազմարվեստի պատմության դասագրքերում: Դրանք պետք է ավելացնեն այն հերոսապատումները, որոնցով հայ մանուկը սնվում է դեռեւս մայրական գրկում ու մեծանում:

Այո՛, Հայկի ամրոցի, Արամի տան, քաջարի արմենների ու նրանց ներկայիս հետնորդների մասին ազգերը հիացումով են խոսում: Երբեմն կանոնավոր բանակով, երբեմն աշխարհազորով, երբեմն փոքրիկ ջոկատներով կամ էլ ֆիդայական շարժումներով կարողացել ենք պաշտպանել մեր հայրենի հողը, Մայր եկեղեցին, մեր լեզուն ու պատիվը: Բոլոր այն զինվորները, ում երկրային կյանքն ավարտվել է հենց մարտի դաշտում, պահապան հրեշտակների ուղեկցությամբ միացել են երկնային զորքերին, որպես հաղթանակած եկեղեցի, իրենց մարտը շարունակելու աներեւույթ մարտադաշտում ու չարի դեմ պայքարը հասցնելու տեսլական ավարտին ու փառքին»,- մասնավորապես նշեց ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդը: Իր խոսքում Սրբազանն անդրադարձավ նաեւ հայ ազգի նվիրյալ մարտիկների մարտիրոսությանը՝ առ Աստված աղոթք հայցելով, որ մարտի դաշտում եւ անկայուն խաղաղության ընթացքում թշնամու դավադիր գնդակից ընկած հայ զինվորների շիրիմներին երկնային խաղաղությունն իջնի, եւ Բարձրյալի ամենափրկիչ Աջը միշտ սատար լինի Հայոց Բանակին ու հայ զինվորին՝ անառիկ պահելու Հայոց աշխարհի սահմանները:

Սուրբ Պատարագի ընթացքում հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի կատարվեց Հանրապետական մաղթանք, որի ժամանակ ներկաներն աղոթք բարձրացրեցին Հայրենիքի եւ Հայոց Բանակի անսասանության համար:

Պատարագի Սրբազան արարողության ավարտին կատարվեց նաեւ հոգեհանգստյան կարգ՝ Հայրենիքի պաշտպանության համար նահատակված բոլոր քաջարի զինվորների համար:

Այնուհետեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ նաեւ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքի եւ օրհնության խոսքը բերեց ներկաներին՝ հրավիրելով ամենքին աղոթք բարձրացնել առ Աստված զինծառայողների համար, ովքեր երբեմն իրենց կյանքի գնով անառիկ են պահում մեր հայրենիքի սահմանները: Վեհափառ Հայրապետը ՀՀ զինված ուժերի սպասավորներին մաղթեց հաջողություններ իրենց դժվարին ծառայության մեջ եւ, որ Տերը հաղթական պահի հայ զինվորի բազուկը՝ ի փառս մեր ժողովրդի: Ներկաներին իր օրհնության խոսքը հղեց նաեւ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, ով մասնավորապես ընդգծեց, որ բանակը մեր լուսեղեն ապագայի երաշխիքն է, դարեդար Հայոց Եկեղեցին եւ Հայոց Բանակը գործել են միահամուռ՝ ուս-ուսի տված, եւ հենց դրանում էլ կայանում է մեր ազգի հզորությունը:

Իր խոսքում ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը շնորհակալություն հայտնեց Հայոց Եկեղեցուն եւ նրա սպասավորներին՝ մշտապես բանակի կողքին լինելու համար: Նախարարը նշեց, որ շարքային զինվորից մինչեւ հրամանատար հայրենիքի սահմանները պաշտպանելիս գործում են անձնվիրաբար:

Այնուհետեւ, ի գնահատություն Հայրենիքին ու հավատավոր ժողովրդին մատուցած ծառայությունների, Հայրապետական Սրբատառ կոնդակի ընթերցումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու *«Սուրբ Ներսես Շնորհալի»* պատվո բարձր շքանշանով պարգեւատրեց գեներալ-մայորներ **Կամո Քոչունցին, Անդրանիկ Մակարյանին, Իշխան Մաթեւոսյանին, Արմեն Ղահրամանյանին**, գնդապետ **Գեւորգ Մելքոնյանին**:

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով զինծառայողների հոգեւոր դաստիարակության գործում ներդրած զգալի ավանդի համար, ինչպես նաեւ ՀՀ ԶՈՒ կազմավորման 23-րդ տարեդարձի կապակցությամբ, Տավուշի թեմի առաջնորդ **Տեր Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը**, Կոտայքի թեմի առաջնորդ **Տեր Առաքել արքեպիսկոպոս Քարամյանը**, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ **Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը,** Շիրակի թեմի առաջնորդ **Տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանը** եւ Գեղարքունյաց թեմի առաջնորդ **Տեր Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը** պարգեւատրվեցին *«Անդրանիկ Օզանյան»* մեդալով:

Խաղաղություն ենք պարտադրելու

Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Պաշտպանության նախարարությունում

Պարոնա՛յք գեներալներ, սպաներ,

Մինչեւ զեկույցներին անցնելը, մի քանի խոսք եմ ուզում ասել:

Ուզում եմ սկսել նրանից, որ տարվա սկիզբը լարված էր, եւ մենք ականատեսն ենք հակառակորդի բազմաթիվ նախահարձակ գործողությունների: Ունեցանք ցավալի կորուստներ, որոնց համար սգում ենք՝ ընկած բոլոր տղերքի ընտանիքների եւ հարազատների հետ միասին: Կարծում եմ՝ որեւէ մեկը չի կասկածում, որ տղերքից յուրաքանչյուրի կյանքի համար ադրբեջանցիները թանկ են վճարելու. նրանք թանկ են վճարել, այսօր թանկ են վճարում եւ ապագայում այդպես էլ լինելու է:

Հակառակորդի նախահարձակ գործողությունների նպատակը ակնհայտ է: Ադրբեջանի իշխանությունը չի թաքցնում, որ քաղաքական ու ռազմական միջոցների համադրմամբ ձգտում է մշտական լարվածություն ստեղծել մեր շուրջ: Դա պարզ շանտաժի քաղաքականություն է, որի հիմնական հասցեատերը ոչ այնքան մենք ենք, որքան միջազգային հանրությունը: «Ամեն ինչ միայն ինձ» անհեթեթ գործելաոճով կատարյալ ձախողման հասնելով բանակցային գործընթացում՝ պաշտոնական Բաքուն փորձում է բոլորին ցույց տալ, թե ինչեր կարող է անել, եթե չբավարարվեն իր բոլոր քմահաճույքները, առանց հասկանալու, առանց լրջորեն վերլուծելու, թե ինչպիսի սարսափելի հետեւանքներ կարող է ունենալ այդ ամենը հենց իր համար: Ավելին, ամեն անգամ, երբ Հայաստանի ներսում որեւէ խնդիր է առաջանում կամ ցավալի իրադարձություն է տեղի ունենում,

Ադրբեջանին թվում է, թե եկել է իր աստեղային ժամը, եւ նա անմիջապես իրեն ցույց է տալիս առաջին գծում:

Իզուր: Շատ իզուր: Մենք քսանհինգ տարի առաջ՝ ավելի բարդ ու դժվար պայմաններում, իրենց ավել-պակաս ելույթներն ու ախորժակը տեսել ենք: Այս դահլիճում հավաքվածների մեծ մասը, վստահ եմ, հիշում են, թե ինչպիսի հոխորտանքներ էին հղում նրանք 90-ական թվականների սկզբներին, թե ինչպես էին սպառնում Ստեփանակերտում ադրբեջանական դրոշ ծածանել, նրանցից մեկն այնքան էր իրեն կորցրել, որ խոսում էր Սեւանում իր ոտքերը լվանալու մասին, իսկ Շուշիից հեռու ամեն շաբաթ կրկնում էին, որ կարճ ժամանակում Շուշիում թեյ են խմելու: Մենք այդ ամենը տեսել ենք: Չենք հոխորտացել, բայց մարտի դաշտում մեր գերակայությունն ենք նրանց պարտադրել: Այսօր մենք շատ ավելի պինդ ենք: Այնքան պինդ ենք, որքան երբեւէ չենք եղել:

Մենք պատերազմ հրահրելու որեւէ պատճառ չունենք: Մենք ինքներս միջադեպեր չենք հրահրում: Դուք դրա մասին շատ լավ գիտեք: Եվ մենք երբեք նախահարձակ չենք լինում: Դա մեզ պետք չի բնավ:

Սակայն մեր հանդեպ ձեռնարկված ցանկացած միջադեպի հետեւել եւ հետեւելու է հատուցման գործողություն: Մինչեւ վերջերս մեր ձեռնարկած պատասխան գործողությունները եղել են սիմետրիկ իրենց ձեւով եւ ասիմետրիկ՝ ավելի մեծ կորուստներ հասցնելու առումով:

Այսուհետ կարող են տեղի ունենալ նաեւ ձեւով ասիմետրիկ հատուցման գործողություններ: Տաք գլուխները բազմաթիվ անակնկալների պիտի սպասեն: Ավելին, մեր սահմաններին եւ շփման գծի երկայնքով ավելի մեծ եւ սպառնալից կուտակումների պարագայում, մենք մեզ վերապահում ենք կանխարգելիչ հարվածներ հասցնելու իրավունքը:

Թող ոչ ոք չմտածի, որ մենք ձեռքներս ծալած սպասելու ենք, թե երբ է արհավիրքը մտնելու մեր տուն: Մեզ համար արհավիրք պատրաստողի հանդեպ մենք պարտավոր ենք լինել անողոք: Կրկնում եմ՝ դիմացինի արկածախնդրությունը կստիպի մեզ գնալ անդառնալի վնասների հասցման ճանապարհով:

Մենք հասկանում ենք, որ Ադրբեջանի իշխանությունները պատրաստ են անխնա կերպով մահվան բերան ուղարկել իրենց հարյուրավոր եւ հազարավոր քաղաքացիների՝ միայն թե իրենց աթոռները լինեն պաշտպանված: Բայց մենք չենք կարող հանդուրժել, որ դա կատարվի մեր քաղաքացիների կյանքերի ու մեր զինվորների կյանքերի գնով: Դա չի կարող արվել մեր հաշվին:

Մենք մնում ենք այն համոզման, որ ճիշտը պայմանավորվելն է, որ ճիշտը բանակցությունները շարունակելն է, եւ հայտնի սկզբունքների ներքո պայմանավորվածություններ ձեռք բերելն է, իսկ դա հնարավոր է միայն զինադադարի պահպանման եւ վստահության կամուրջներ կառուցելու պարագայում: Կամուրջներ այրելով՝ ոչ ոք լավ բանի չի հասել եւ չի հասնելու:

Ես մեկ անգամ եւս ի լուր բոլորի հայտարարում եմ. մենք պատրաստ ենք ե՛ւ լավին, ե՛ւ վատին: Իմ սեղանին առկա են հնարավոր բոլոր տարբերակները:

Սթափ գործընկերոջ հետ կարող ենք եւ պարտավոր ենք խաղաղություն բանակցել:

Ոչ սթափ հակառակորդին պարտավոր ենք եւ, անպայման, խաղաղություն ենք պարտադրելու:

Այսքանը: Հիմա անցնենք օրակարգի հարցերին:

Կառավարության որոշմամբ

Նպատակային գործուղումով սովորող ուսանողները պարտավոր են վերադառնալ հայրենի բնակավայր

ՀՀ կառավարությունը որոշել է խստացնել վերահսկողությունը սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի այն ուսանողների նկատմամբ, ովքեր պետության հաշվին նպատակային գործուղմամբ բարձրագույն կրթություն են ստանում, սակայն հետո հրաժարվում են հետ վերադառնալ: Արդյունքում՝ սահմանամերձ բնակավայրերը շարունակում են ունենալ տարբեր տեսակի մասնագետների առաջնային պահանջարկ, իսկ մայրաքաղաքում մեծանում է բարձրագույն կրթությամբ գործազուկ մասնագետների բանակը:

Հեռավոր գյուղերից նպատակային գործուղմամբ բարձրագույն կրթություն ստացող երիտասարդները պայմանագիր են կնքում պետության հետ, համաձայն որի՝ պետությունը արտամրցութային կարգով, ընդամենը դրական միավորների շեմը հաղթահարելու պայմանով, նրանց համար ապահովում է անվճար կրթություն՝ իր վրա վերցնելով ուսման վարձի բեռը: Նման ուսանողները, համաձայն պայմանագրի, պարտավոր են վերադառնալ իրենց բնակավայրը, առնվազն մի քանի տարի աշխատել այնտեղ: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նպատակային տեղերով կրթություն ստացողների 90 տոկոսից ավելին հետ չի վերադառնում եւ փաստացի չի կատարում պետության նկատմամբ ստանձնած պարտականությունները:

Նկատի առնելով խնդիրը՝ ՀՀ Կառավարությունը որոշել է հստակություն մտցնել պայմանագրում ու խստացրել է այս ոլորտի իր քաղաքականությունը: Ըստ այդմ՝ գործադիրի կողմից սահմանվել են սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրեր աշխատելու նպատակով գործուղվող եւ պայմանագրային պարտավորությունը չկատարող բուհերի շրջանավարտների կողմից ուսման ծախսի փոխհատուցման կարգը, չափը, ժամկետները: Որոշման նախագիծը ներկայացնող՝ ԿԳ փոխնախարար **Կարինե Հարությունյանը** Կառավարության նիստում նշել է, որ չկատարելու դեպքում ուսանողը *«կփոխհատուցի իր ուսման վճարի եւ կրթաթոշակի կրկնապատիկը»*:

Կառավարությունը սահմանել է, որ այսուհետ նպատակային կրթություն ստացող ուսանողը բուհն ավարտելուց հետո առնվազն 5 տարի ժամկետով գործուղվում է աշխատելու՝ ստացած մասնագիտությամբ, ՀՀ կառավարության նախատեսած բնակավայրերում: Սա, իբրեւ պարտադիր պայման, ամրագրվելու է ուսանողի կամ, եթե նա անչափահաս է, ծնողի հետ կնքված պայմանագրում: Ամրագրվելու է նաեւ, որ 5 տարի ժամկետով աշխատելու պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը պարտավոր է լինելու փոխհատուցել ուսումնառության տարիների ընթացքում պետական բյուջեից իր ուսումնառության համար ծախսված գումարը: *«Փոխհատուցման ենթակա գումարի չափը կազմում է ուսումնառության տարիների համար ՀՀ պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի եւ պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը»,-* նշված է Կառավարության որոշման մեջ:

Համապատասխան գումարը բուհի հաշվեհամարին շրջանավարտը պարտավոր է վճարել եռամսյա ժամկետում:

Բուհն ավարտելուց հետո շրջանավարտը մինչեւ տվյալ տարվա սեպտեմբերի 20-ը բուհին ներկայացնում է բնակավայրում գործունեություն ծավալող կազմակերպության հետ կնքված աշխատանքային պայմանագրի պատճենը, իսկ հաջորդող յուրաքանչյուր տարիների համար՝ տվյալ կազմակերպությունում աշխատելու վերաբերյալ տեղեկանք:

Իսկ պարտադիր զինվորական ծառայության ենթակա շրջանավարտներն աշխատանքի պետք է անցնեն զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում:

Սահմանված ժամկետում շրջանավարտի կողմից փոխհատուցման ենթակա գումարը չվճարելու կամ ուսման ծախսերի փոխհատուցումից հրաժարվելու դեպքում բուհը միջոցներ է ձեռնարկում՝ ուսման ծախսերի փոխհատուցումը դատական կարգով իրականացնելու համար՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջների համաձայն: Փոխհատուցված գումարի 30 տոկոսը տնօրինում է բուհը, իսկ 70 տոկոսը վերադարձվում է ՀՀ պետական բյուջե:

Գումարի փոխհատուցումը չի գործում հատուկ դեպքերում, եթե շրջանավարտը հիվանդացել է Կառավարության հատուկ ցանկով սահմանված հիվանդություններից մեկով, կամ էլ եթե համապատասխան կրթություն ստացած անձը ծառայության է անցել ոստիկանությունում կամ զինված ուժերում: Նախկինում գործող այն դրույթը, երբ բուհն ավարտելուց հետո, օրինակ, նպատակային կրթություն ստացած անձը, ամուսնանալով մայրաքաղաքում, չէր վերադառնում հայրենի բնակավայր, այսուհետ չի գործելու:

Անդրանիկ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Տնտեսագիտական համալսարան

Վարչապետը գոհ էր նախորդ տարվա արդյունքներից

ՀՀ վարչապետ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) խորհրդի նախագահ **Հովիկ Աբրահամյանի** գլխավորությամբ տեղի է ունեցել բուհի խորհրդի նիստը:

Տնտեսագիտական համալսարանի ռեկտոր **Կորյուն Աթոյանը** հանդես է եկել բուհի 2014 թվականի ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների եւ 2014 թվականի բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշների մասին զեկույցով: Ռեկտորն անդրադարձել է ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու կատարելագործմանն ուղղված աշխատանքներին, ուսանողների առաջադիմությանը, գիտական գործունեությանը, փորձառության կազմակերպմանը, հասարակայնության հետ կապերին, բուհի միջազգայնացմանն ու տնտեսական գործունեությանը: Կորյուն Աթոյանի խոսքով՝ բուհի հիմնական խնդիրը եղել եւ շարունակում է մնալ աշխատաշուկայում մրցունակ ու բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը: Համալսարանում իրականացվող բարեփոխումներն ուղղված են կրթության արդյունավետության բարձրացմանը, միջազգային կապերի զարգացմանն ու ընդլայնմանը, արտերկրի համալսարանների հետ համագործակցության խորացմանը: Զեկույցի ընթացքում ռեկտորը ներկայացրել է նաեւ համալսարանի 2015 թվականի համար նախատեսվող բյուջեի նախագծի ցուցանիշները:

Նիստի արդյունքներով խորհուրդը քննարկել եւ հավանություն է տվել ՀՊՏՀ-ի 2014 թվականի ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու ֆինանսատնտեսական գործունեությանը, համալսարանի 2014 թ. բյուջեի կատարման արդյունքները գնահատել բավարար եւ հաստատել համալսարանի 2015 թ բյուջեն:

Ամփոփելով խորհրդի նիստի արդյունքները՝ Հովիկ Աբրահամյանը գոհունակությամբ նշել է, որ համալսարանի ղեկավարությունն ու աշխատակազմը ջանքեր չեն խնայել՝ 2014 թ. համալսարանի առջեւ դրված խնդիրները լուծելու, մերօրյա մարտահրավերներին դիմագրավելու եւ զարգացում ապահովելու հարցում:

«Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի 2014 թ. համապարփակ զեկույցը հերթական անգամ փաստում է, որ «Մենք փոխվում ենք» կարգախոսով մեկնարկած բարեփոխումների գործընթացը հաստատուն կերպով առաջ է ընթանում: Անցած տարի համալսարանը գործունեության գրեթե բոլոր ոլորտներում արձանագրել է հաջողություններ. բուհի սոցիալական քաղաքականությունն ունի հասցեագրված ուղղվածություն, արդեն երկրորդ տարին է՝ իրականացվում է աշխատակիցների բժշկական ապահովագրություն, սոցիալապես անապահով առաջադեմ ուսանողներն արժանանում են կրթաթոշակի, 10 տոկոսով բարձրացել է աշխատակիցների աշխատավարձը»,- նշել է վարչապետը:

Կառավարության ղեկավարի խոսքով՝ համալսարանի միջազգայնացման ճանապարհին կարեւոր իրադարձություն էր Բրիտանական բիզնես դպրոցի բացումը: Համալսարանը հաջողությամբ շարունակում է Տեմպուսի ծրագրերը: Հովիկ Աբրահամյանի համոզմամբ՝ այս ամենն իր զգալի նպաստը կբերի համալսարանի մրցունակության բարձրացմանը միջազգային ասպարեզում: Վարչապետը նշել է, որ նոր որակ է ստացել նաեւ համալսարանի գիտահետազոտական կյանքը: *««Ամբերդ» հետազոտական կենտրոնը նախաձեռնել է նոր հետազոտությունների շարք, որոնց թեմաները, իմ հանձնարարությամբ, առաջարկել են բոլոր ծյուղային նախարարությունները: Վստահ եմ՝ այս նախաձեռնությունն էլ ավելի կբարձրացնի հետազոտությունների որակը եւ կենտրոնի հեղինակությունը»,-* ասել է Հովիկ Աբրահամյանը: Վարչապետը կարեւորել է, որ կրթօջախի հիմնանորոգման, միջավայրի արդիականացման խնդիրները շարունակում են առաջնահերթ մնալ: Հիմնանորոգվել եւ նոր տեսքի են բերվել համալսարանի 3 մասնաշենքերի նախասրահները, շուրջ 7 տասնյակ լսարաններ: Կառավարության ղեկավարի խոսքով՝ այս բոլոր քայլերը միտված են բուհի զարգացմանն ու մրցունակության բարձրացմանը:

Վարչապետն ընդգծել է, որ ՀՀ կառավարությունը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում կրթական համակարգի շարունակական կատարելագործման եւ արդիականացման հիմնախնդիրները: Այս համատեքստում Հովիկ Աբրահամյանը գոհունակությամբ նշել է, որ որակյալ տնտեսագետներ պատրաստող հայաստանյան ամենամեծ բուհն իր գործունեությամբ հաշվետու տարվա ընթացքում նոր հաջողություններ է արձանագրել:

Ամփոփելով խոսքը՝ վարչապետը բուհի ղեկավարությանը եւ պրոֆեսորադասախոսական կազմին հորդորել է անել ամեն ինչ՝ նոր ձեռքբերումներ եւ հաջողություններ արձանագրելու համար:

Հայրենիք - Սփյուռք

Նոր ձեռագրեր եւ հնատիպ գրքեր հանձնվեցին Մատենադարանին

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի փոքր սրահում տեղի ունեցավ հալեպահայ **Սոսե Պարոնյանի**՝ ՀՀ սփյուռքի նախարարությանը նվիրաբերած ձեռագրերի եւ հնատիպ գրքերի՝ Հայաստանի գլխավոր ձեռագրապահոցին փոխանցելու հանդիսավոր արարողությունը:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** եւ Մատենադարանի տնօրեն **Հրաչյա Թամրազյանը**:

Ողջունելով ներկաներին՝ Սփյուռքի նախարարը մասնավորապես նշեց. *«Խորհրդանշական է, որ այսօր պատվաբեր առաքելությամբ գտնվում ենք Մատենադարանում՝ հայկական ձեռագրերի հարուստ մշակույթի այս ինքնատիպ պահոցում: Ազգի նվիրյալ զավակ հալեպահայ Սոսե Պարոնյանի մեծ հայրն ու մայրը՝ Մովսես եւ Զարթիկ Ասլանյան-Պարոնյանները, Հայոց ցեղասպանության արյունալի օրերին, մահն աչքերի առաջ ունենալով, փրկել ու Խարբերդից Հալեպ են տեղափոխել մեծ արժեք ներկայացնող այս գրքերը՝ աղոթագրքեր, բառարաններ, ավետարաններ, 18-րդ դարի մեկ ձեռագիր: Սոսեի ծնողները՝ Անդրանիկ եւ Մարգրիտ Ղանդիլյան-Պարոնյանները, ամենայն հոգածությամբ պահել ու պահպանել են դրանք՝ իրենց նվիրական առաքելության իրավահաջորդը դարձնելով Սոսեին: Սոսե Պարոնյանը Սիրիայի համար այս տագնապալի օրերին որոշում է կայացրել՝ Պարոնյանների ընտանեկան ժառանգությունից 1 ձեռագիր եւ 14 հնատիպ գիրք «Սիրիահայության շտապ օգնության մարմնի» եւ Հալեպում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսության աջակցությամբ նվիրել Հայրենի պետությանը՝ ի դեմս ՀՀ սփյուռքի նախարարության: Այդ անգնահատելի նվերը պատասխանատվության մեծ զգացումով հանձնում ենք մաշտոցյան Մատենադարանին՝ ի պահ»:*

Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանը շնորհակալություն հայտնեց նվիրատվության համար: Նա նշեց, որ վերապրած կարելի է համարել Մատենադարանի ողջ հավաքածուն, որը նվիրատվությունների շնորհիվ վերջին տարվա ընթացքում համալրվել է 500-ից ավելի ձեռագրերով: *«Պետք է կրկնապատկենք մեր ջանքերը՝ ձեռագրերը տուն դարձնելու համար: Մեր խորին երախտագիտությունը նվիրատուին՝ Սոսե Պարոնյանին, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին՝ մեր զարգացման ծրագրերին մշտապես սատարելու համար»,-* ասաց նա:

Արարողության ընթացքում ցուցադրվեցին գրքերի նվիրատու Սոսե Պարոնյանի եւ Բերիո թեմի մամլո խոսնակ, Սիրիայի Հայ Առաքելական, Հայ Կաթողիկե եւ Հայ Ավետարանական համայնքների ընդհանուր խոսնակ Ժիրայր Բեհյանի տեսաուղերձները:

Հրաչյա Թամրազյանը Սոսե Պարոնյանին պարգեւատրեց Մատենադարանի *«Սուրբ Մեսրոպ Մաշտոց»* հուշամեդալով:

Եռակողմ հուշագիր

Նոր կադրերի պատրաստում՝ ի նպաստ դատապարտյալների

Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում տեղի է ունեցել բուհի, ՀՀ արդարադատության նախարարության եւ ՀՀ առողջապահության նախարարության միջեւ համագործակցության եռակողմ հուշագրի ստորագրման արարողություն:

Հուշագրի շրջանակում կողմերը պարտավորվել են բարելավել եւ զարգացնել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց եւ դատապարտյալների բժշկական սպասարկման կազմակերպումը: Մասնավորապես՝ շեշտվել է կալանավորված անձանց եւ դատապարտյալների առողջության պահպանումն ու վերականգնումը, բժշկական օգնության եւ սպասարկման ծառայություններ մատուցող մասնագիտական անհրաժեշտ կադրերի պատրաստման կարեւորությունը եւ քերակատարողական հիմնարկներում բանտային՝ *«պենիտենցիար»* բժշկության համակարգի ներդրումը:

ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանն** իր խոսքում կարեւորել է այս նախաձեռնությունը՝ շեշտելով, որ այն նոր խթան է նպատակային կրթական ծառայությունների մատուցման տեսանկյունից: *«Բուհի կարեւոր առաքելությունը նպատակային մասնագետներ պատրաստելն է, եւ ես գործընկեր գերատեսչությունների այս նախաձեռնությունը հատկանշական եմ համարում՝ նեղ մասնագետների պատրաստման տեսանկյունից: Այս ծրագիրը որոշակի պատվեր է բուհիմ՝ պատրաստել այնպիսի կադրեր, որոնք ապագայում պահանջված կլինեն աշխատաշուկայում»,*- ասել է նա:

ՀՀ արդարադատության նախարար **Հովհաննես Մանուկյանը** եւ Առողջապահության նախարար **Արմեն Մուրադյանն** իրենց խոսքում կարեւորել են նախաձեռնությունը եւ հույս հայտնել, որ համագործակցությունը կնպաստի ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը: Մասնավորապես՝ Արդարադատության նախարարը նշել է, որ նշանակումից օրեր անց արդեն իսկ իր ուշադրության կենտրոնում է հայտնվել մամուլում շրջանառվող այն տեղեկատվությունը, որ քրեակատարողական համակարգում բուժանձնակազմի պակաս կա, եւ քրեակատարողականների բժիշկները ֆիզիկապես չեն հասցնում օգնություն ցուցաբերել բոլոր դատապարտյալներին:

«Բացի մամուլի հրապարակումները՝ մտահոգիչ էին նաեւ հասարակական դիտորդական խմբի, Մարդու իրավունքների պաշտպանի հաշվետվությունները, որոնք նույնպես անդրադառնում էին քրեակատարողական հիմնարկները բժշկական կադրերով համալրելու անհրաժեշտությանը: Ուսումնասիրելով հարցի էությունը, ինչպես նաեւ ստանալով բազմաթիվ նամակներ հենց քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանցից ու նրանց հարազատներից՝ որոշեցինք հարցին տալ համակարգային լուծում»,- ասել է նախարարը: Նրա խոսքով՝ բազմաթիվ աշխատանքային քննարկումների եւ մասնագիտական խորհրդատվությունների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ՀՀ առողջապահության նախարարության եւ Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետ կնքել համագործակցության հուշագիր, որով լուծումներ կտրվեն տարիների ընթացքում համակարգի առջեւ ծառացած մի շարք խնդիրների:



Հովհաննես Մանուկյանը վստահեցրել է, որ իր անմիջական վերահսկողության տակ է պահելու հուշագրով ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացումը:

Միջոցառմանը մասնակցել են կրթության, առողջապահության եւ իրավական համակարգի ներկայացուցիչներ:

Հուշագրով ամրագրված նպատակներն իրականացնելու համար կձեռնարկվեն հետեւյալ միջոցառումները՝

1) քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության կազմակերպման եւ բուժօգնության որակի գնահատման չափորոշիչների ու չափանիշների մշակման, դրանց շարունակական կատարելագործման եւ դրանց իրականացման դիտարկման աշխատանքներ,

2) քրեակատարողական հիմնարկներում սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, համաճարակաբանական հսկողության, վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելման եւ կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն եւ ուսուցում,

3) «Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում բանտային (պենիտենցիար) բժշկության գծով դասընթացի հիմնում եւ համապատասխան կրթական ծրագրի մշակում,

5) բժշկական կադրերի պատրաստման (պատրաստում, մասնագիտացում, վերամասնագիտացում), կատարելագործման, շարունակական մասնագիտական զարգացման, առկա կադրային ներուժի պահպանման, զարգացման ծրագրերի մշակում,

6) բանտային (պենիտենցիար) բժշկության, ինչպես նաեւ հարակից մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման եւ դրա հետ կապված կրթական գործունեության կազմակերպման, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների բուժական անձնակազմի վերապատրաստման ծրագրերի եւ դասընթացների մշակման եւ իրականացման ապահովում,

7) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» եւ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում բանտային (պենիտենցիար) բժշկության կամ հարակից մասնագիտությունների գծով կլինիկական բազաների հիմնում,

8) ՀՀ առողջապահության նախարարության, Համալսարանական կլինիկաների կողմից խորհրդատվական եւ գործնական աջակցության ցուցաբերում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությանը՝ քրեակատարողական հիմնարկներում հիվանդների բարդ ընթացքով բուժման գործընթացում:

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«Շախմատը դպրոցում»

Նախաձեռնությունը պատիվ կբերեր ցանկացած երկրի

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում տեղի է ունեցել շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնի պաշտոնական բացումը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ ԿԳ նախարար **Արմեն Աշոտյանը**, ՀՀ շախմատի ակադեմիայի նախագահ **Սմբատ Լպուտյանը**, ԱԺ պատգամավորներ, կրթության եւ գիտության ոլորտի ներկայացուցիչներ:

ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ողջունելով կենտրոնի բացումը, նշել է, որ նախարարությունը լիարժեք եւ շարունակական աջակցություն կցուցաբերի կենտրոնին: *«2009 թվականից առ այսօր Սմբատ Լպուտյանի հետ լծվել ենք «Շախմատը դպրոցում» ծրագրի իրականացմանը: Այս նախաձեռնությունը ՀՀ կրթական համակարգի լավագույն պատմություններից մեկն է: Գուցե վաղ է խոսել ծրագրի արդյունքի մասին, սակայն վստահեցնում եմ, որ կրթական նման լայնամասշտաբ նախաձեռնությունը պատիվ կբերի ցանկացած երկրի: Մենք տարիներ շարունակ ներմուծել ենք կրթական առաջատար տեխնոլոգիաներ. ներկայումս մենք հնարավորություն ունենք՝ ի դեմս շախմատի, ունենալ արտահանվող արդյունք: Վստահեցնում եմ ձեզ, որ տասնյակ երկրների նախարարներ մեծ հետաքրքրություն են դրսեւորում «Շախմատը դպրոցում» ծրագրի հանդեպ»,*- նշել է Ա. Աշոտյանը՝ տեղեկացնելով, որ մարտին Ս. Լպուտյանի հետ կներկայացնի ծրագրի արդյունքները ԱՄԷ-ում կայանալիք համաշխարհային կրթական համաժողովին: *«Կենտրոնի բացումը լավագույն պատասխանն է երբեմն հնչող քննադատություններին: Իհարկե, այս ամենում կա հանրային կարծիքի ձեւավորման լավագույն փորձ, երբ աշխարհի առատատար ՁԼՄ-ները լուսաբանում են վերոնշյալ ծրագիրը, որը մեր երկրի մասին դրական հիշատակումների անսպառ աղբյուր է»,*- նշել է նախարարը՝ հույս հայտնելով, որ կենտրոնի բացմամբ ավելի խորքային վերլուծության կենթարկվի ծրագիրը եւ հիմք կհանդիսանա հետագա քաղաքականության շտկման համար:

Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանն** իր ողջույնի խոսքում նշել է, որ ավելի վաղ բուհում կայացած *«Շախմատը կրթական համակարգում»* համաժողովը երեւույթ էր մեր երկրի գիտական կյանքում, քանի որ համաժողովին մասնակցել է 31 երկրի ներկայացուցիչ, հնչել են բազմաթիվ արժեքավոր գիտական զեկույցներ: *«Համաժողովին հանդես է եկել նաեւ գիտնականների մի խումբ, որը ձեւավորվել էր բուհի երիտասարդ դասախոսներից՝ հոգեբան, սոցիոլոգ եւ այլն: Խումբը կատարել էր հետազոտական աշխատանք, որը մեծ ռեզոնանս է ունեցել, այդ թվում՝ արեւմտյան մամուլում: Այդ է պատճառը, որ մենք չէինք կարող հրաժարվել այս նախաձեռնությունից: Եվ ահա այսօր շախմատի ակադեմիայի եւ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ բացվում է շախմատի կրթական հետազոտությունների կենտրոնը, որը համալրված է 11 աշխատակցով: Պատահական չէ, որ մեր այս նորամուծությունը հետաքրքրել է արեւմտյան մի շարք առաջատար բուհերի»,*- նշել է ռեկտորը:

ՀՀ շախմատի ակադեմիայի նախագահ Սմբատ Լպուտյանը, անդրադառնալով նախաձեռնությանը, նշել է. *«Մենք պետք է այս ծառը ջրենք, հոգատար սիրով մեծացնենք, որպեսզի այն տա համեղ եւ օգտակար պտուղներ ոչ միայն մեր երկրի, այլ նաեւ ողջ աշխարհի համար»,*- նշել է նա:

Միջոցառման ընթացքում կենտրոնի տնօրեն **Վահան Սարգսյանը** ներկայացրել կենտրոնի գործունեությունը, մարտահրավերներն ու նպատակները՝ ընդգծելով, որ կենտրոնի նպատակն է նպաստել հանրակրթական դպրոցում շախմատի ուսուցման որակի շարունակական բարելավմանը եւ իրականացնել այդ գործընթացի մշտադիտարկում:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

Հանդիպումներ՝ Լոնդոնում

Լոնդոնում կազմակերպված՝ կրթության նախարարների համաշխարհային համաժողովի շրջանակում ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանն** աշխատանքային հանդիպումներ է ունեցել Համաշխարհային բանկի կրթության ոլորտի գլխավոր տնօրեն **Կլաուդիա Քոսթինի** եւ Ռուսաստանի Դաշնության կրթության եւ գիտության նախարարի տեղակալ **Վենյամին Կագանովի** հետ:

Համաշխարհային բանկի կրթության ոլորտի գլխավոր տնօրեն Կլաուդիա Քոսթինը հանդիպման ընթացքում շնորհակալություն է հայտնել ՀՀ կրթության եւ գիտության նախարարին՝ մասնակցության հրավերն ընդունելու, համատեղ ծրագրերը արդյունավետ եւ հետեւողական իրականացնելու համար: Նա պատրաստակամություն է հայտնել այսուհետ եւս ակտիվ համագործակցելու եւ աջակցելու Հայաստանում կրթության եւ գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումներին: Իր հերթին նախարար Ա. Աշոտյանը, կարեւորելով երկկողմ համագործակցությունը, համառոտ ներկայացրել է Հայաստանում ՀԲ վարկային ծրագրերով իրականացված միջոցառումների ընթացքը եւ արձանագրված արդյունքները՝ միաժամանակ ընդգծելով ծրագրերի շարունակականության ու նոր ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը: *«Հայաստանի կառավարությունը եւ կրթության եւ գիտության նախարարությունն ամեն ինչ անում են միջազգային չափանիշներին համապատասխան կրթական համակարգ ձեւավորելու եւ զարգացնելու համար՝ ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային առումով: Մենք կարիք ունենք համագործակցության հաջողված օրինակների, որոնց հիման վրա կկազմենք ու կիրականացնենք նոր ծրագրեր»,-* իր խոսքում նշել է Ա. Աշոտյանը՝ հավելելով, որ ՀԲ հետ համագործակցությունն այդ համատեքստում հաջողված օրինակներից է:

ՌԴ նախարարի տեղակալի խնդրանքով տեղի ունեցած հանդիպման ընթացքում կողմերը անդրադարձել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի:

Մրցույթի ամփոփում

Ստացան Հնդկաստան մեկնելու ուղեգրեր

Հայաստանում, Հնդկաստանի դեսպանատան հրավերով, Հնդկաստանի ազգային տոնի՝ Հանրապետության օրվա առիթով *«Արմենիա Մարիոթ»* հյուրանոցում կազմակերպվել է ընդունելություն, որին ներկա է գտնվել ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանը**: Միջոցառման ընթացքում ամփոփվել են *«Հնդկաստանն իմ պատկերացումներով»* նկարչության եւ շարադրության մրցույթի արդյունքները, որը կազմակերպվել էր ՀՀ կրթության եւ գիտության նախարարության, ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանատան եւ *«Թումո»* ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի համատեղ ջանքերով:

Արմեն Աշոտյանն իր խոսքում շնորհավորել է Հնդկաստանի դեսպանին եւ հնդիկ ժողովրդին՝ Հնդկաստանի Հանրապետության օրվա կապակցությամբ, նշելով տպավորիչ առաջընթացը, որն ապրում է Հնդկաստանի Հանրապետությունը վերջին տարիներին՝ ցուցադրելով ոչ միայն բացառիկ մշակութային արժեքներ, այլեւ տպավորիչ տնտեսական աճ եւ ռազմական ներուժ: *«Ժամանակակից Հնդկաստանը նորագույն տեխնոլոգիաների, որակյալ կրթության, բարի եւ ջերմ մարդկանց երկիր է: Խորհրդանշական է, որ անցյալ տարի մենք նախաձեռնեցինք մի մրցույթ, որն անսպասելիորեն դարձավ ամենազանգվածային ստեղծագործական մրցույթներից մեկը Հայաստանի դպրոցականների համար: Հարյուրավոր հայ աշակերտներ, մեկ ամիս շարունակ առաջնորդվելով «Ես սիրում եմ քեզ, Հնդկաստա՛ն» գաղափարով, իրենց ջերմությունն ու սերը նվիրեցին հնդիկ ժողովրդին՝ նկարների ու շարադրությունների միջոցով: Հուսով եմ, որ այս գեղեցիկ միջոցառումը կունենա շարունակություն, եւ մենք կկազմակերպենք նույնպիսի մրցույթ նաեւ Հնդկաստանում, որտեղ հարյուրավոր հայ աշակերտների կողքին կկանգնեն հազարավոր հնդիկ աշակերտներ՝ նվիրելով իրենց սերը հայ ժողովրդին»,-* իր խոսքում նշել է Արմեն Աշոտյանը:

Իր հերթին Հայաստանում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան **Սուրեշ Բաբուն**, շնորհակալություն հայտնելով նախարարին՝ մրցույթի կազմակերպմանն աջակցելու համար, ընդգծել է, որ *«Հնդկաստանն իմ պատկերացումներով»* նկարչության եւ շարադրության մրցույթը դեսպանատան ամենամեծ նախաձեռնություններից էր. *«Այս մրցույթը հայ-հնդկական բարեկամության ամրապնդմանը նվիրված ամենամեծ դիվանագիտական հաղթանակն է»,-* իր խոսքում նշել է դեսպանը:

Այնուհետեւ հայտարարվել են հաղթողների անունները, որոնց մրցանակները հանձնել է ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանը: Մրցանակային առաջին տեղեր գրաված 4 դպրոցականներ՝ **Նանե Պետրոսյանը** եւ **Վիկտորյա Թորոսյանը** (շարադրություն), **Սիրանուշ Մխիթարյանը** եւ **Ալվարդ Բաղդասարյանը** (նկարչություն), ստացել են Հնդկաստան մեկնելու ուղեգրեր:

«Հնդկաստանն իմ պատկերացումներով» նկարների եւ շարադրության մրցույթի առաջին փուլին մասնակցել է 1500 աշակերտ, որնցից 120-ը անցել են երկրորդ փուլ: Նրանցից 14-ը ստացել են տարբեր կարգի մրցանակներ:

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Մասնագիտական կրթություն

ՄԿՈՒ ոլորտի տնօրենները նույնպես հավաստագրման քննություններ կհանձնեն

Հանրակրթական եւ ավագ դպրոցների տնօրեններից հետո հավաստագրման քննություններ հանձնելու հերթը միջին մասնագիտական հաստատությունների՝ քոլեջների եւ նախնական արհեստագործական ուսումնարանների տնօրեններինն է: Կառավարության տարեվերջյան նիստում հաստատվել է *«Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգը»:* Նոր կարգով սահմանվում է, որ ՄԿՈՒ ոլորտում հաստատության տնօրենի թափուր տեղի ընտրության մրցույթին կարող են մասնակցել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված եւ հաստատության ղեկավարման իրավունք՝ հավաստագիր ստացած անձինք:

Ինչպես հանրակրթական հաստատությունների դեպքում, այստեղ եւս մրցույթն անցկացնելու է Կառավարման խորհուրդը: Մրցույթի նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու է լիազոր մարմնի, այս դեպքում՝ ՀՀ ԿԳՆ-ի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը, որը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելու է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի եւ զանգվածային լրատվության այլ միջոցներով, հնգօրյա պարբերականությամբ՝ առնվազն երկու անգամ: Հայտարարության տեքստում պարտադիր պետք է նշվեն պաշտոնի անվանումը, մրցույթի նախապատրաստական աշխատանքները կատարող մարմնի գտնվելու վայրը եւ հեռախոսահամարը, մրցույթի անցկացման օրը, ժամը, հայտերի ընդունման վերջնաժամկետը:

Ինչպես մեզ հետ զրույցում տեղեկացրեց ՀՀ ԿԳՆ Նախնական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ **Ռոբերտ Աբրահամյանը**, ՄԿՈՒ հաստատությունների այն տնօրենները, ովքեր այս պահին աշխատում են անժամկետ պայմանագրերով, անպայման կհանձնեն հավաստագրման քննություններ, ինչպես նաեւ հաջորդ քայլով Կառավարման խորհուրդների կողմից կհայտարարվի մրցույթ՝ տնօրենների թափուր տեղերի համար: Իսկ քոլեջների ու ուսումնարանների այն տնօրենները, ովքեր արդեն իսկ ընտրվել են մրցութային կարգով եւ աշխատում են որոշակի՝ տվյալ պարագայում 5 տարի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերով, կշարունակեն աշխատել՝ մինչեւ պայմանագրային ժամկետի ավարտը: Պայմանագրային ժամկետի ավարտից հետո հերթական նոր մրցույթին մասնակցելու համար հավակնորդը պետք է պարտադիր ունենա հավաստագիր:

Ինչ վերաբերում է հավաստագրման գործընթացի կազմակերպմանը՝ նախ Նախարարության կողմից կհայտարարվի վերապատրաստող կազմակերպությունների ընտրության մրցույթ: Այդ նպատակով ՀՀ ԿԳՆ-ն արդեն մշակել է թեստավորման փուլի եւ վերապատրաստման ծրագրերի հարցաշարերը (Հարցաշարը կտպագրվի *«Կրթություն»* շաբաթաթերթի առաջիկա համարներում, ինչպես նաեւ կզետեղվի ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում), որոնց հիման վրա վերապատրաստող կազմակերպության հավակնորդները պետք է կազմեն իրենց վերապատրաստման ծրագրերը: Վերապատրաստող կազմակերպությունները ընտրվում են ՀՀ ԿԳՆ կողմից՝ մրցութային կարգով: ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանի հրամանով արդեն հաստատվել են *«Նախնական մասնագիտական (արհեստագործական) եվ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով դիմած անձին վերապատրաստող կազմակերպության ընտրության (երաշխավորման) եւ դիմած անձի վերապատրաստման կարգը»,* ինչպես նաեւ *«Նախնական մասնագիտական (արհեստագործական) եվ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման քննության կազմակերպման եւ հավաստագրման, հավաստագրման հանձնաժողովի կազմավորման եւ գործունեության կարգը»:*

ՀՀ ԿԳՆ միջին մասնագիտական կրթության վարչության պետի տեղեկացմամբ՝ հավաստագիր ստանալու համար հավակնորդը երկու փուլով՝ գրավոր (թեստային) եւ բանավոր քննություն է հանձնելու: Քննական հարցերի 70 տոկոսը վերաբերելու է կրթության ոլորտի օրենսդրության եւ իրավական ակտերի իմացությանը, 10 տոկոսը՝ Աշխատանքային օրենսգրքին, 10 տոկոսը՝ ՀՀ սահմանադրությանը, 10 տոկոսը՝ հաշվապահությանը եւ գնումների գործընթացին:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սիրո մե՛ր հովանավորը. Սուրբ Սարգիս զորավար

Սուրբ Սարգիս զորավարը իր որդու՝ Մարտիրոսի եւ 14 քաջ մարտիկների հետ նահատակվել է՝ հանուն քրիստոնեական հավատքի:

Արիության համար Սուրբ Սարգիսը Մեծն Կոստանդիանոս կայսեր (285-337) կողմից կարգվում է իշխան եւ սպարապետ՝ Հայաստանին սահմանակից Կապադովկիայում: Նա ոչ միայն գերազանց սպարապետ էր, այլեւ հիանալի քարոզիչ: Օգտվելով կայսեր հոժարությունից՝ իր իշխանության տակ գտնվող քաղաքներում քանդում է մեհյաններ, կառուցում եկեղեցիներ, տարածում քրիստոնեությունը: Երբ Հուլիանոս Ուրացողի թագավորության օրոք (360-363) սկսվում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, Սուրբ Սարգիսը, աստվածային հայտնությամբ հրաման առնելով հեռանալ կայսրության սահմաններից, իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնյա Հայաստանում, ուր թագավորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Հուլիանոսը մեծ զորքով շարժվում է Պարսկաստանի վրա, Հայոց արքան, ձգտելով իր երկիրը զերծ պահել հարձակման վտանգից, հորդորում է Սարգսին ծառայության անցնել Շապուհի մոտ:

Շապուհը սիրով ընդունում է Սուրբ Սարգսին եւ նշանակում նրան զորագնդերի հրամանատար: Զորականներից շատերը, տեսնելով փայլուն զորավարի բարեպաշտությունն ու վարքով վկայած նվիրումն առ Աստված, իր աղոթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարվում էին հեթանոսությունից եւ դառնում քրիստոնյա: Սակայն Շապուհը պահանջում է նրանից պաշտել կրակը եւ զոհ մատուցել: Զորավարն անմիջապես մերժում է այն՝ ասելով. *«Երկրպագելի է մեկ Աստված՝ Ամենասուրբ Երրորդությունը, Ով ստեղծել է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնե աստվածներ չեն, հողեղեն մարդը դրանք կարող է փչացնել»:* Այդ խոսքերից հետո Սուրբ Սարգիսը կործանում է բագինը: Զայրացած ամբոխը հարձակվում է Սուրբ Սարգսի եւ նրա որդու վրա: Առաջինը նահատակության պսակն ընդունում է նրա որդին՝ Մարտիրոսը: Սուրբ Սարգիսը բանտարկվում է եւ աներեր մնալով իր հավատքի մեջ՝ գլխատվում: Նահատակվելուց հետո Սուրբ Սարգսի մարմնի վրա լույս է ծագում: Քրիստոնեական հավատքի համար նահատակվում են նաեւ Սուրբ Սարգսին հավատարիմ տասնչորս զինվորները: Հավատացյալները նահատակների մարմիններն ամփոփում Համիան քաղաքում:

Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը Սուրբ Սարգսի մասունքները բերում է Կարբի (Աշտարակի շրջան)՝ տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի:

Առաջավորաց պահք

Սուրբ Սարգսի տոնին նախորդում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված Առաջավորաց պահքը: Պահքը տեւում է հինգ օր (այս տարի՝ հունվարի 26-30-ը ներառյալ):

Սուրբ Սարգիս. երիտասարդների եւ սիրո բարեխոս

Ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի ուսումնասիրությունների համաձայն՝ Սուրբ Սարգիսը հովանավորել է Սասունցի Դավթին եւ Սասնա բոլոր հերոսներին ոչ միայն ռազմի դաշտում, այլ նաեւ սիրո մեջ:

Սուրբ Սարգիս Զորավարի տոնը Հայաստանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլեւ ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Սուրբ Սարգիս զորավարը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում: Այդ օրը երիտասարդներն աղոթում են Սրբին, որ իրենց աղոթքները հասցնի առ Աստված: Սուրբ Սարգիսը սիրո երազանքն իրականացնող Սուրբ է:

Սուրբ Սարգսի մասին բազմաթիվ ավանդապատումներ կան: Ահավասիկ դրանցից մեկը:

Աղքատ Աշուղ Ղարիբը սիրում է մի մեծահարուստի աղջկա՝ Շահ-Սանամին: Վերջինս եւս սիրում է նրան, բայց Աշուղն աղքատ էր, եւ աղջկա հայրը արգելում է նրանց ամուսնանալ, քանի որ մտադրված էր նրան կնության տալ մի մեծահարուստի: Աշուղ Ղարիբը որոշում է մեծ կարողություն կուտակելու համար գնալ օտարություն՝ աշխատելու: Սակայն, մինչեւ այդ, Աշուղ Ղարիբն իր սիրած էակից խոստում է առնում՝ յոթ տարի սպասել իրեն: Պայման է դնում, որ եթե ուշանա անգամ մեկ օր, աղջիկը թող ամուսնանա հոր ցանկությամբ:

Այդ յոթ տարիները շատ դժվար են անցնում Աշուղ Ղարիբի համար: Նա զրկված էր իր գեղեցկուհուն տեսնելու հնարավորությունից, որեւէ լուր չուներ նրա մասին, սակայն չէր հուսահատվում, այլ կարոտով սպասում այն օրվան, երբ նրանք կհանդիպեն, ընտանիք կկազմեն եւ ամբողջ կյանքը կապրեն միասին:

Յոթ տարի շարունակ գիշեր ու զօր աշխատելով՝ Աշուղ Ղարիբը կարողություն ստեղծեց եւ տունդարձի ճամփա ընկավ: Ճանապարհը լի էր փորձանքներով եւ խոչընդոտներով: Թվում էր, թե Աշուղ Ղարիբն իր հույսը պետք է կորցնի. չի հասնի իր սիրած էակին: Նա ազնիվ սրտով եւ արդար մտքով աղոթում է Սուրբ Սարգսին՝ հայցելով արագահաս Սրբի օգնությունը:

Սուրբ Սարգիսը, լսելով սիրահարված Աշուղի աղոթքը, իր արագահաս ճերմակ նժույգով բարձրացրած մրրիկի մեջ իսկույն հայտնվում է, Աշուղ Ղարիբին նստեցնում ձիու գավակին եւ մեկ ակնթարթում հասցնում Շահ-Սանամի մոտ: Աղջկա հայրը, տեսնելով Աշուղ Ղարիբի կամքը, կատարված հրաշքը, նրանց անկեղծ սերն եւ նվիրվածությունը, օրհնում է երկուսի միությունը:

Ժողովրդական սովորություններից է նաեւ, երբ Սուրբ Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Այդ օրը հիշատակելի սովորություններից է փոխինդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Սուրբ Սարգիս զորավարի ձիու պայտի հետքին: Ըստ ավանդույթի՝ Սուրբ Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի եւ ում մատուցարանի մեջ դրված ալյուրի կամ փոխինդի մեջ թողնի իր սպիտակ (մաքրություն, անաղարտություն է խորհրդանշում) ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա երիտասարդի երազանքը:

Տոնի առթիվ սիրահարված երիտասարդները միմյանց բացիկներ եւ քաղցրավենիք են նվիրում:

Գարեգին Բ Ամենայն Հայոց հայրապետի տնօրինությամբ՝ Սուրբ Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր: Այս տարի այն կնշվի հունվարի 31-ին: Այդ օրը Սուրբ Սարգիս Զորավարի անունը կրող եկեղեցիներում կմատուցվի Սուրբ Պատարագ, որից հետո կկատարվի երիտասարդների օրհնության կարգ:

Սուրբ Սարգսի տոնի կապակցությամբ՝ այս տարի եւս, ինչպես ավանդաբար, միջոցառումների ընդարձակ ծրագիր է նախպատրաստել Արարատյան Հայրապետական թեմը:

Աղոթք Սուրբ Սարգսի բարեխոսության

Գերագույն պատվի՛
արժանացար՝
Բարեխոսելու
Բանն Աստծո՛ւն,
Աղոթքի՛ ընդունող,
Խնդրանքների՛ կատարող,
Արագահաս
Սո՛ւրբ Սարգիս,
Բարեխո՛ս մեր անձերի
համար ի Քրիստոս:
Նրա՛ն՝ Բարձրյալի՛ն,
վայել է փառք,
իշխանություն եւ պատիվ,
Այժմ եւ միշտ եւ
հավիտյանս հավիտենից,
Ամեն:

Ըստ Փավստոս Բուզանդի

Բյուզանդական Վաղես կայսրն արիոսական աղանդի հետեւորդ էր եւ հալածում էր քրիստոնյաներին: Դրա համար պատժվում է եւ 378 թվականին սպանվում Աստծուց եղած հրաշքներով: Նրան սպանում են քրիստոնեության համար պայքարած սուրբ նահատակները, որոնց միանում է նաեւ Սուրբ Սարգիսը:

Սասունցի Դավթի հանդիպումը Սուրբ Սարգսի հետ

(Քաղվածք *«Սասնա ծռեր»* էպոսից)

Դավիթ էդ տեղեն ետ դարձավ ու գնաց, կայնավ Խանդութ խանումի փանջարի առեչ, ըսեց.

- Խանդութ խանում, ես կերթամ կռիվ:

Քշեց, գնաց, շատ, քիչ՝ Աստված գինա, մեկ էլ տեսավ յառջեւանց թոզ ու դուման կիգա:

Էկավ, տեսավ օր սըփ Սարգիսն է:

Դավիթ գնաց, օր սըփ Սարսին համբուրեր: Սըփ Սարգիս ըսեց.

- Հանե քո Սըփ Նշան, ես համբուրեմ, նոր դու ընձի համբուրե:

Հանեց Սըփ Նշան, համբուրեց սըփ Սարգիս, էն լէ սըփ Սարգսին համբուրեց:

- Դե գնա,- ըսեց,- Աստված խըտ քըզի էղնի: Ու քշեց ձին:

Քեռի Թորոսիկ մնաց աղոթք էնելու:

Տոնի իրավեր

Հունվարի 31-ին, Սուրբ Սարգիս Զորավարի անունը կրող եկեղեցիներում կմատուցվի Սուրբ Պատարագ, որից հետո ամբողջ օրվա ընթացքում կկատարվի երիտասարդների օրհնության կարգ:

*Ամենայն Հայոց **Գարեգին Բ** Հայրապետի տնօրինությամբ հունվարի 31-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի կբերվեն Սուրբ Սարգիս Զորավարի մասունքները: Մատենադարանից առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի երկրպագության կբերվի նաեւ 1693թ. Սուրբ Սարգսում Ավետիս երեցի կողմից ընդօրինակված Ավետարանը: Հունվարի 31-ին՝ ժ. 10.30-ից, Սուրբ Պատարագի ընթացքում ժողովուրդը կկարողանա հաղորդ լինել Սրբի մասունքներին եւ հայցել Սրբի բարեխոսությունը:*

*Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի** օրհնությամբ այդ օրը թեմի Առաջնորդանիստ, Նոր Նորքի եւ Արգավանդի Սուրբ Սարգսի անունը կրող եկեղեցիները բաց կլինեն մինչեւ ժ. 22:00-ը:*

Հունվարի 31-ին՝ 14:00-ին, առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցուց կմեկնարկի խաչերթ: Մասնակիցները Մեսրոպ Մաշտոց եւ Մարշալ Բաղրամյան պողոտաներով կուղեւորվեն դեպի Պողոսյան այգիներ՝ Սիրահարների պուրակ: Խաչերթին մասնակցելու են թեմի քահանաները, երիտասարդներ, ուսանողներ, ռազմական ու ոստիկանական ակադեմիայի սաներ: Խաչերթին կարող են միանալ բոլորը: ժ. 15:00-ին «Պողոսյան» պարտեզներում կկազմակերպվի մեծ տոնախմբություն: Համերգային ծրագրի ընթացքում այգու տարածքում կշրջի նվերաբաշխ ձիավորը: Մուտքն ազատ է:

Տոնի նախօրյակին՝ հունվարի 30-ին՝ ժ. 18.00-ից, կկայանա բացօթյա մեծ միջոցառում Կարապի լճի տարածքում: Ծրագրում՝ քահանայի օրհնություն, ուրախ երգեր ու պարեր, տոնը խորհրդանշող ձիավոր, սիրո յուրահատուկ խոստովանությունների մրցույթ, աղաբլիթներ, բացիկներ, փուչիկներ՝ բոլոր ներկաների համար: Մուտքն ազատ է:

Հունվարի 30-ին՝ ժ. 14:00-ին կբացվի Արարատյան Հայրապետական թեմի եւ Գեղագիտության Ազգային կենտրոնի կողմից կազմակերպված մանկապատանեական տոնական ցուցահանդեսը՝ նվիրված երիտասարդների բարեխոս Սուրբ Սարգսի տոնին:

Ցուցահանդես-մրցույթներ կկազմակերպվեն Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, Երեւանի Գեղարվեստի պետական ակադեմիայում, Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանում եւ Հակոբ Կոջոյանի անվան գեղարվեստի դպրոցում:

Հունվարի 29-ից Սուրբ Սարգսի տոնին նվիրված միջոցառումներ կկազմակերպվեն նաեւ զորամասերում, ռազմական կրթօջախներում եւ հոսպիտալում:

Թատերական ինստիտուտ

Բացվեց Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում տեղի է ունեցել Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնի (ՍՏՈՒԿ) բացումը, որին մասնակցել է ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանը**: Նախարարը շրջել է նորաբաց կենտրոնի սրահներում, ծանոթացել նորագույն տեխնոլոգիաներին, զրուցել կենտրոնի աշխատակիցների եւ ուսանողների հետ:

Ողջունելով բուհի պրոֆեսոր-դասախոսական կազմին եւ ուսանողներին՝ Արմեն Աշոտյանը նշել է, որ կենտրոնի բացումը հերթական միջոցառումն է Նորարարությունների մրցակցային հիմնադրամի գործունեության արդյունքում: *«Ծրագրի շրջանակում Կրթության եւ գիտության նախարարությունը հատկացրել էր 6 մլն դոլարին համարժեք գումար, որի արդյունքում ՀՀ 10 բուհ հնարավորություն են ստացել արդիականացնել իրենց ուսումնական բազաները, կրթական ծրագրերը, ներմուծել կրթական նոր տեխնոլոգիաներ»,*- ասել է նախարարը՝ հավելելով, որ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտը Կառավարությունից շարունակական աջակցություն է ստանում: *«2014 թվականի համեմատ՝ ՀՀ կառավարությունն այս տարվա պետական բյուջեով 37 մլն. դրամ հավելյալ գումար կտրամադրի բուհին, ինչը հնարավորություն կտա ենթակառուցվածքների զարգացումից բացի՝ իրականացնել նաեւ այլ ծրագրեր: Կարծում եմ՝ ներդրումները բուհում պարտավորեցնում են թանկարժեք տեխնիկան ծառայեցնել իր նպատակին, որպեսզի ուսանողները կարողանան իրենց ունակությունները լավագույնս դրսեւորել»,*- ընդգծել է նախարարը:

Ինստիտուտի ռեկտոր **Դավիթ Մուրադյանն** իր հերթին նշել է. *«Մենք այսօր, փաստորեն, ունենք փոքրիկ կինոստուդիա, կինոարտադրության ամբողջական համալիր: Ունենք կինոտեխնիկա, որը մեզ հնարավորություն է տալիս կատարել ամբողջական արտադրություն, սկսել ֆիլմն առաջին փուլից՝ անցնելով բոլոր արտադրական փուլերով մինչեւ ավարտը: Սա կարեւոր ձեռքբերում է: Անշուշտ, մեծ է ԿԳ նախարարության աջակցությունն այս կենտրոնի ստեղծման գործում»:* Ռեկտորը տեղեկացրել է, որ կենտրոնի տեխնիկայի շնորհիվ ուսանողները կսկսեն նկարահանել իրենց առաջին դիպլոմային աշխատանքները: Նա նաեւ ասել է, որ բուհը նախորդ տարին եզրափակել է առանց պարտքերի: *«Երկու օր առաջ տեղի է ունեցել բուհի Կառավարման խորհրդի նիստը, որի ընթացքում հաշվետվություն է ներկայացվել նախորդ տարվա աշխատանքների վերաբերյալ: Բուհն առանց պարտքերի է փակել տարին: Բոլոր, այդ թվում՝ վարկային պարտքերը, մարվել են, եւ 2015 թվական ենք մտնում 8 մլն դրամ խնայողությամբ»,*- նշել է նա:

Հիշեցնենք, որ Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին համընթաց՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է արդիականացնել եւ բարելավել բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգը՝ ներդնելով բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորման արդյունավետ սկզբունքներ ու մեխանիզմներ: Այս ուղղությամբ կարեւոր նախաձեռնություն է Հայաստանում Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) ստեղծումը, որը բարձրագույն կրթության բնագավառում նորարարությունների խթանման քաղաքականության գործիք է: ՆՄՀ-ի աջակցությամբ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնի ստեղծումը նպատակ ունի նպաստել ԵԹԿՊԻ-ի ինստիտուցիոնալ բարեփոխումներին եւ ապահովել նորարական տեխնոլոգիաների ներդրումը բուհում՝ համադրելով թվային մեդիայի՝ հեռուստատեսության, կինոյի, անիմացիայի, խաղարկային արվեստի նորագույն տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում: Ստեղծարար տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնը ԵԹԿՊԻ-ի ուսանողների համար ստեղծված միջավայր է՝ սովորելու եւ ստեղծագործելու համար:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ամփոփումներ

Հյուսիսային համալսարանն ընդլայնում է միջազգային կապերը

Հյուսիսային համալսարանի ութ պատվիրակություն՝ դասախոսների եւ վարչական աշխատակիցների մասնակցությամբ, տարբեր ծրագրերի շրջանակներում վերապատրաստումներ են անցել Գրացի (Ավստրիա), Պալերմոյի (Իտալիա), Մալմոյի եւ Լինչոփինգի (Շվեդիա), Հայդելբերգի (Գերմանիա), Ադամ Միցկեւիչի (Լեհաստան), Լյովենի (Բելգիա) համալսարաններում: Եվրոպական գործընկերներից ձեռք բերված փորձը կիրառելով Հյուսիսային համալսարանում՝ բուհում ձեռնամուխ են եղել եվրոպական չափանիշներին համապատասխան կրթություն կազմակերպելուն, ինչը կնպաստի միջազգային հավատարմագրման գործընթացը հաջողությամբ ավարտին հասցնել:

Հյուսիսային համալսարանի համար միջազգային համագործակցության եւ արտաքին կապերի ակտիվացման առումով հատկապես բարենպաստ էր 2014 թվականը: Դեռեւս 2012 թվականից բուհը սկսեց սերտորեն համագործակցել եվրոպական լավագույն բուհերի հետ դրամաշնորհային էրազմուս Մունդուս, Տեմպուսի *«Վերիտաս»* եւ *«Գովերն»* ծրագրերի շրջանակներում, ինչի շնորհիվ Հյուսիսային համալսարանի բազմաթիվ աշխատակիցներ մասնակցել են վերապատրաստման դասընթացների ու թրեյնինգների: Հանրապետության հինգ առաջատար բուհերի շարքում՝ երեք պետական եւ երկու մասնավոր, Հյուսիսային համալսարանը, մասնակցելով Համաշխարհային բանկի միջոցներով միջազգային չափանիշներով փորձնական պետական հավատարմագրման, ուժերը ներդրեց՝ եվրոպական չափանիշներին համապատասխան կրթություն կազմակերպելու, իր գիտամանկավարժական կադրերին վերապատրաստելու համար: Նախ՝ Որակի ապահովման վարչության աշխատակիցները Համաշխարհային բանկի *«Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ հետագա բարելավման նպատակով բուհերի դրամաշնորհի տրամադրում»* ծրագրի շրջանակներում գործուղվեցին Շվեդիայի Լինչոփինգի համալսարան. նպատակն էր ծանոթանալ որակի ապահովման եվրոպական համակարգին:

Բուհի 3 աշխատակից հայաստանյան ութ բուհերի ներկայացուցիչների հետ Տեմպուսի *«Գովերն»* ծրագրով թրեյնինգների մասնակցեցին Ավստրիայի Գրաց համալսարանում: Գործուղման ընթացքում մասնակիցները կարեւոր տեղեկատվություն ստացան Ավստրիայի եւ ընդհանրապես Եվրոպայի կրթական տարածքի վերաբերյալ: Համալսարանի մեկ այլ պատվիրակություն էլ Բելգիայի Լյովեն քաղաքում մասնակցեց վերոնշյալ ծրագրի թրեյնինգին, որի նպատակն էր համախմբել գործընկեր բուհերի ֆակուլտետային մակարդակի ադմինիստրացիայի ներկայացուցիչներին՝ քննարկելու այն մարտահրավերները, որոնք ծառացել են նրանց առջեւ՝ Բոլոնյան գործընթացի շրջանակներում մոդուլները, կրթական ծրագրերը կազմելու ընթացքում: Արդյունավետ էին նաեւ նույն ծրագրի շրջանակում Պալերմոյի համալսարանում անցկացված վերապատրաստման դասընթացները, որին մասնակցեցին Որակի ապահովման վարչության երեք աշխատակիցներ: Թրեյնինգն ուղղված էր ուսումնական գործի կատարելագործմանն ու բուհում ռեգիստրարի ստեղծմանը:

Այնուհետեւ համալսարանի աշխատակիցների մեկ այլ խումբ էլ մասնակցեց Գերմանիայի Հայդելբերգի համալսարանում անցկացված վերապատրաստման դասընթացներին, որը կազմակերպվել էր Տեմպուս ծրագրի Վերիտաս նախագծի շրջանակում: Այն ուղղված էր հետբուհական կրթության զարգացմանը Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխանելու միջոցով:

Հյուսիսային համալսարանը Տեմպուս-Վերիտաս ծրագրի շրջանակում ներկայումս ակտիվորեն մասնակցում է նաեւ ասպիրանտական կրթության բարեփոխումների գործընթացին: Ուշագրավն այն է, որ համալսարանը ՀՀ-ում գործող մասնավոր բուհերից միակն է, որին վստահված է նշյալ ծրագրի շրջանակում հանդես գալ ասպիրանտական կրթական բարեփոխումների միջազգային հարթակում: Դրա վկայությունն էր Ավստրիայի Գրացի համալսարանում բուհի երկու աշխատակիցների նեկայացուցչական շնորհանդեսը՝ նվիրված ոչ միայն Հյուսիսային համալսարանում մեկնարկած ասպիրանտական կրթության ընթացքին, այլեւ հետբուհական կրթության բարեփոխումների շրջանակում համալսարանի կողմից ներկայացվող առաջարկներին: Հաշվի առնելով հետբուհական կրթական բարեփոխումների շրջանակում Հյուսիսային համալսարանի կողմից ցուցաբերվող ակտիվությունը՝ Տեմպուս-Վերիտաս ծրագրային դրույթների պահանջով 2015թ. գարնանը համալսարանում կմեկնարկի ասպիրանտական կրթության պիլոտային ծրագիր, որտեղ հետբուհական ուսուցումը կկազմակերպվի միջազգային չափանիշներով՝ Զալցբուրգյան սկզբունքներին համահունչ:

Համալսարանը 2012 թվականից ընդգրկվել է նաեւ *«Էրազմուս-Մունդուս»* ծրագրի՝ ուսանողների փոխանակման դրամաշնորհային նախագծում, որը հնարավորություն է տալիս ուսանողներին մեկ ուսումնական տարի սովորել, իսկ վարչական եւ դասախոսական անձնակազմին մեկ ամիս վերապատրաստվել Եվրոպայի յոթ լավագույն՝ բուհի գործընկերներ համալսարաններում: Այս ծրագրի շրջանակներում 2013/14 ուս.տարում Հյուսիսային համալսարանի լրագրության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսում ուսանել են Լեհաստանի Ադամ Միցկեւիչի անվան համալսարանի ուսանողները, իսկ Հյուսիսային համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի մեկ ուսանողուհի մեկ կիսամյակ նույն ծրագրի շրջանակներում ուսանել է Ա. Միցկեւիչի համալսարանում:

Սա գնահատելի փաստ է, քանի որ, որպես կանոն, ավելի մեծ հոսք նկատվում է Արեւելյան գործընկերության երկրների բուհերից դեպի եվրոպական բուհեր, իսկ հակառակ գործընթացը գրեթե բացակայում է:

Այս տարի շարժունությանը մասնակցելու հայտ են ներկայացրել Հյուսիսային համալսարանի յոթ ուսանողներ, իսկ եւս երկու ուսանող Լեհաստանի Ադամ Միցկեւիչ համալսարանից հայտ են ներկայացրել՝ մեկ ուսումնական տարի Հյուսիսային համալսարանում սովորելու համար:

Ինչ վերաբերում է նույն ծրագրի շրջանակում աշխատակազմի շարժունությանը, Հյուսիսային համալսարանը եւս այն քիչ գործընկեր-բուհերից է, որը հյուրընկալեց Շվեդիայի Մալմոյի համալսարանի դասախոս Աննաբելլա Լոկոնսոլին՝ մեկ ամիս փորձի փոխանակում իրականացնելու: Իսկ բոլորովին վերջերս Հյուսիսային համալսարանը Ուկրաինայի մարդու զարգացման *«Ուկրաինա»* միջազգային բաց համալսարանի Վիննիցայի սոցիալ-տնտեսագիտական ինստիտուտի հետ կնքեց գիտության, կրթության, գիտահետազոտական, ուսումնադաստիարակչական բնագավառներում համագործակցության պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ երկու բուհերը պարտավորվում են աշխատակցել կրթական նախագծերի եւ ծրագրերի իրականացման, ուսումնառության մեթոդների եւ տեխնոլոգիաների, գիտամանկավարժական կադրերի փոխանակման բնագավառներում, ինչպես նաեւ իրականացնել եւ հրատարակել համատեղ գիտական ուսումնասիրություններ, փոխանակել երկու բուհերին առնչվող տեղեկատվություն:

Բուհի ղեկավարությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը անդամագրվել է Եվրասիական տնտեսական միությանը, հրաման է ընդունել ընթացիկ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից համալսարանի *«Իրավագիտություն», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում», «Ինֆորմատիկա եւ հաշվողական տեխնիկա»* մասնագիտությունների համապատասխան կուրսերում, որպես ռուսաց լեզվի դասավանդման շարունակություն, իրականացնել այդ լեզվի լրացուցիչ (խորացված) ուսուցում՝ շաբաթական 4 ժամ (2 մուտք) ծավալով, կամընտրական հիմունքներով, ինչպես նաեւ համալսարանի օտար լեզվի եւ գրականության ֆակուլտետում որպես երկրորդ օտար լեզու նախատեսել նաեւ ռուսաց լեզուն: Միաժամանակ, սկսած 2015-2016 ուսումնական տարվանից՝ համալսարանում կկազմակերպվեն ուսանողների ընդունելություններ՝ *«Հաշվապահական հաշվառում եւ հարկում», «Ինֆորմատիկա եւ հաշվողական տեխնիկա», «Ռուսաց լեզու եւ գրականություն»* մասնագիտություններով՝ ուսուցումն իրականացնելով հիմնականում ռուսաց լեզվով:

Բուհը առաջիկայում բազմաթիվ ծրագրեր ունի իրագործելու: Ամենակարեւորներից են Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումները, այդ թվում՝ նույն թեմայով միջազգային գիտաժողովը, որին կմասնակցեն պատվիրակներ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղազախստանի, Թուրքիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Վրաստանի, Իրանի, Հնդկաստանի, Ուրուգվայի, Հունաստանի, Կիպրոսի, Լեհաստանի, Շվեդիայի, Բելգիայի, Իռլանդիայի եւ այլ երկրների բուհերից ներկայացուցիչներ: Միջազգային գիտաժողովը պատշաճ ձեւով կազմակերպելու համար համալսարանը պատրաստվում է համագործակցել այդ երկրներում գործող ՀՀ դեսպանատների հետ:

Հիշում եմ եւ պահանջում

Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՓԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Ճանապարհք արդարոց որպէս լոյս ծագեն, առաջնորդեն եւ լուսաւորեն, մինչեւ տիւն լուսաւորեսցէ»
(Առակ. Դ 18):

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի առջեւ ենք՝ մեր հոգիներում արդարութեան եւ ճշմարտութեան անլռելի, զօրեղ պահանջով:

2015 թուականի իւրաքանչիւր օր մեր ժողովրդի համար ոգեկոչման եւ խնկարկման օր է, հոգեւոր երթ դէպի Հայրենիքում եւ Սփիւռքում վեր յառնած նահատակաց յուշարձաններ՝ ծնրադիր խոնարհումով աղօթք բարձրացնելու անշիրիմ մնացած մեր անմեղ զոհերի հոգիների համար, ովքեր մահն ընդունեցին՝ մերժելով հաւատուրացութիւն եւ ազգուրացութիւն: Յիրաւի, «Արդարների ճանապարհները նման են ծագող լոյսի, որն առաջնորդում եւ լուսաւորում է նրանց, մինչեւ որ օրը լրիւ լուսաւորի»:

1915 թուականին եւ հետագայ տարիներին օսմանեան Թուրքիայի կողմից իրագործուեց Ցեղասպանութիւն մեր ժողովրդի նկատմամբ: Արեւմտեան Հայաստանում՝ բնօրրան մեր Հայրենիքում եւ Թուրքիայի հայաշատ բնակավայրերում կազմակերպուած ջարդերին, սովին ու հիւանդութիւններին, որ իշխում էին բռնագաղթի ճանապարհներին, զոհ գնացին ազգիս մէկ եւ կէս միլիոն զաւակներ: Թալանուեց դարերով ստեղծուածը, արդար վաստակը մեր ժողովրդի: Խոնարհուեցին ու աւերուեցին հազարաւոր մեր վանքերն ու եկեղեցիները, ազգային հաստատութիւնները, դպրոցները, ոչնչացուեցին եւ կորստեան մատնուեցին մեր հոգեւոր ու մշակութային արժէքները: Հայաթափուեց Արեւմտեան Հայաստանը, որտեղ մեր ժողովուրդը հազարամեակներ՝ Նոյեան դարից ի վեր, ապրել, արարել եւ իր պատմութիւնն ու մշակոյթն է կերտել:

Մէկ դար առաջ, երբ հայրենազրկուած հայութեան բեկորները սփռուում էին ողջ աշխարհով, երբ Արեւելեան Հայաստանը կենաց եւ մահու գոյամարտ էր մղում թուրքական զաւթիչների դէմ, դժուար էր հաւատալ հայ ժողովրդի ապագային: Բայց այն ճառագեց: Մեր ժողովուրդը Տիրոջ շնորհով յառնեց մահուանից: Հայրենիքի փրկուած հողակտորի վրայ վերականգնեց պետականութիւնը, աւերակներից ու խլեակներից վերակերտեց հայրենի երկիրը, դարձրեց գիտութեան, կրթութեան, մշակոյթի, «լոյսի եւ յոյսի Հայրենիք»: Տարագիր հայութիւնը տարբեր երկրներում իր տունը կառուցեց, հայրենի ծուխը ծխեցրեց, ապրեցրեց ու բարձրացրեց իր հոգեւոր ու ազգային կեանքը: Որտեղ էլ ապրեցին մեր ժողովրդի զաւակները, հասան յաջողութիւնների, արժանացան յարգանքի, վստահութեան, ճանաչուեցին բարեխիղճ աշխատանքով, գիտութեանը, արուեստին, հասարակութեան բարօրութեանը բերած աւանդով: Այսպիսին է վերջին հարիւրամեակի պատմութիւնը մեր ժողովրդի՝ պատմութիւն մաքառումի եւ վերածննդի: Այսօր, հակառակ բոլոր դժուարութիւնների՝ մեր ժողովուրդը ամրապնդում է իր անկախ պետականութիւնը, կերտում իր ազատ նոր կեանքը եւ ազգային վերազարթօնքի յոյսերով, լաւատեսութեամբ ու վստահութեամբ նայում գալիքին:

Փառք Քեզ, բիւր փառք Քեզ, Տէր, «Քո սպառազինութեամբ պաշտպանեցիր մեզ» (Սաղ. Ե 13): Քո յոյսով, Տէր, մեր ժողովուրդը պայծառացաւ ու զօրացաւ: Քո լոյսով փայլեց մեր հոգու հանճարը, Քո զօրութեամբ ծնունդ առան մեր յաղթանակները: Ստեղծեցինք, երբ մեր ստեղծածը աւերեցին, ապրեցինք, երբ ուզեցին կորստեան մատնել մեզ: Դու, Տէր Աստուած մեր, կամեցար, որ ապրի ու բարձրանայ եղեռնագործ ծրագրով մահուան դատապարտուած մեր ժողովուրդը եւ մարդկութեան խղճի եւ միջազգային իրաւունքի առջեւ բարձրացնի ու պաշտպանի իր արդար դատը՝ ընդդէմ պիղատոսեան անտարբերութեան եւ Թուրքիոյ ոճրագործ ժխտողականութեան:

Արդարութեան համար՝ մինչեւ մեր դատի յաղթանակ, միասնաբար՝ Եկեղեցի, Ազգ եւ Պետութիւն, աննահանջ պիտի շարունակենք մեր պայքարը: Արդարութիւն է պահանջում մեր անմեղ զոհերի արիւնը, մեր ժողովրդի կրած տառապանքը, արդարութիւն են պահանջում մեր աւերակուած սրբութիւնները, մեր ժողովրդի ոտնահարուած իրաւունքները, նաեւ՝ կեղծուող եւ խեղաթիւրուող պատմութիւնը մեր ժողովրդի: Ցեղասպանութիւն վերապրած մեր ժողովուրդը հաւատացել եւ հաւատում է, որ տասնեակ երկրների, պետական, հասարակական կազմակերպութիւնների ու անհատների կողքին, ովքեր ճանաչել են Հայոց Ցեղասպանութիւնը, պիտի կանգնեն նորերը, համոզումով, որ արդարութեան հաստատումը պայմանն ու երաշխիքն է թշնամանքից եւ բռնութիւնից զերծ խաղաղ աշխարհի:

Մէկ եւ կէս միլիոն մեր նահատակների յիշատակի առջեւ Մենք երախտագիտութեան Մեր խօսքն ենք վերստին ուղղում այն պետութիւններին, կազմակերպութիւններին եւ անձանց, ովքեր ճանաչել եւ դատապարտել են Հայոց Ցեղասպանութիւնը: Երախտագիտութիւն ենք յայտնում մեր ժողովրդի զաւակներին եղբայրաբար ընդունած երկրներին ու նրանց բարեսէր ժողովուրդներին: Մարդկութեան պատմութեան լուսաւոր էջեր են արդարութեան եւ մարդասիրութեան այսօրինակ դրսեւորումները, որ սերունդներից միշտ պիտի յիշուեն եւ միշտ գնահատուեն ու նպաստեն աշխարհի խաղաղ, անվտանգ, համերաշխ կեանքին:

Հայոց Հայրապետիս համար հոգեւոր մխիթարութիւն է ի լուր մեր ժողովրդեան ծանուցել, որ 2015 թ. ապրիլի 23-ին մեր Սուրբ Եկեղեցին՝ յընթացս սրբազան պատարագի, յատուկ արարողակարգով սրբերի շարքում է դասելու «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նահատակութեան պսակն ընդունած իր զաւակներին՝ Ցեղասպանութեան նահատակ սրբերի յիշատակի օր հռչակելով ապրիլի 24-ը:

Շնորհընկալ ժողովուրդ հայոց, ա՛զգ նահատակ, ա՛զգ յարուցեալ. խրոխտ ապրիր, վստահ քայլիր, հայեացքդ տապանակիր Արարատին՝ աներկմիտ սրտով մեծ պահիր յոյսդ: Քեզ է ուղղուած մեր Տիրոջ խրախոյսն ու պատգամը. «Թէեւ քիչ զօրութիւն ունես, բայց պահեցիր իմ խօսքերը եւ չուրացար իմ անունը: …պահիր ինչ որ ունես, որպէսզի ոչ ոք չառնի քո պսակը» (Յայտն. Գ 8-11): Արդ, պահպանենք մեր ընթացքը Աստուծոյ առաջ արդար ու ճշմարիտ, հաւատքի հաստատուն ուղիներում, որ ծագող այգաբացի պէս ցրում է խաւարը եւ պարզում յոյսի հորիզոնները: Աստուծոյ հետ է մեր ճանապարհը, եւ հաւատքի կեանքը՝ մեր յաղթութիւնը: 100-րդ տարելիցը արդիւնաւորենք մեր ժողովրդի մէկդարեայ մաքառումի եւ վերածննդի ուղին արժեւորելով, որպէսզի մեր զաւակները ճանաչելով իրենց պապերի եւ հայրերի ապրելու եւ ստեղծելու հերոսական կամքը, յանուն ազգի եւ Հայրենիքի

ստանձնած յանձնառութիւնները՝ կերտեն նոր պայծառ օրը հայրենի մեր երկրի ու աշխարհասփիւռ ժողովրդի: Մեր նահատակների յիշատակի ոգեկոչումը դարձնենք ուժ եւ զօրութիւն հոգեւոր, ազգային, հայրենական մեր կեանքին եւ Աստուծոյ ու մարդկանց առաջ արդար ընթացքով լուսաւորենք մեր ճանապարհը դէպի մեր իրաւունքների, մեր նուիրական իղձերի իրականացման հանգրուան:

Քրիստոսակառոյց նուիրական հոգեւոր կենտրոնում ազգիս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղօթում ենք առ Աստուած՝ հայցելով խաղաղութիւն, ապահովութիւն եւ բարօրութիւն մեր Հայրենիքին, սիրեցեալ մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի եւ անմայրամուտ լոյս ու հանգստութիւն՝ Ցեղասպանութեան մեր անմեղ նահատակների հոգիներին: Թող մարդկութեան կեանքում թագաւորեն սէրն ու եղբայրութիւնը, արդարութիւնն ու ճշմարտութիւնը, եւ արդարների ճանապարհները որպէս լոյս ծագեն, առաջնորդեն ու լուսաւորեն, մինչեւ լուսաւորուի նոր օրը խաղաղ ու երջանիկ աշխարհի:

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս
ի 28-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2014
և ի թուին հայոց ՌՆԿԳ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 886

Ամփոփումներ

Ագրարային կրթություն՝ յուրահատուկ ու կարեւոր

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մեկնարկեց հոբելյանական 85-րդ տարին: Լինելով հանրապետության բարձրագույն կրթության առաջնեկներից եւ միակը իր տեսակի մեջ՝ բուհը կրթության բարեփոխումների, նորի կյանքի կոչման ռահվիրաներից է, ավանդականն ու հին, արժեքավոր ձեռքբերումները ժամանակի հրամայականների հետ հրաշալի համադրելու կարողության շնորհիվ:

Ձեռքբերումներն ու անելիքները, նվաճումները արժեւորելու ու սպասելիքները հնարավորինս իրատեսորեն կանխորոշելու նպատակին էր ուղղորդված ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը: Այն վարում էր խորհրդի նախագահը՝ **Սամվել Սարգսյանը**:

Ագրարայինը խոշոր եւ եզակի գիտակրթական հաստատություն է, եւ անցած տարվա գլխավոր առաջնահերթություններից մեկը գիտական կենտրոնների, պրոբլեմային լաբորատորիաների, ուսումնափորձնական տնտեսությունների նյութատեխնիկական ապահովվածության թարմացումն ու արդիականացումն էր: Այս առումով ամենաընդգրկունն ու արմատականը, թերեւս, գյուղմեքենաների ողջ պարկի նորացումն էր: Ընդսմին, մեծ եւ կարեւոր էր ՀՀ կառավարության եւ ԿԳՆ օժանդակությունը: Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում *«Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի ստեղծում»* դրամաշնորհը հնարավորություն ընձեռեց ժամանակակից գյուղտեխնիկա ունենալու համար: Այսուհետ ուսանողները կսովորեն ագրարային տնտեսությունը վարել ժամանակակից միջոցներով՝ կովերի կթի շարժական ագրեգատ, ոչխարների խուզի ագրեգատ, տրակտոր, ցաքաններ՝ ատամնավոր եւ սկավառակավոր, խոտհնձիչ, հնձիչ մոտոբլոկով, կապիչ-մամլիչ եւ այլն:

Վերջին տարիներին Ագրարայինի գործունեության ամենագլխավոր ուղղություններից մեկը Արցախում համալսարանի մասնաճյուղի ստեղծումն էր: Շատ շուտով կրթջախը Ստեփանակերտից կտեղափոխվի Շուշի, որտեղ հրաշալի մասնաշենքերը պատրաստ են արդեն՝ կահավորված լաբորատորիաներով, հարուստ գրադարանով, համակարգչային հագեցվածությամբ: 2015-ին նախանշվող հիմնարար ծրագրերից է ԼՂՀ-ում ուսումնաարտադրական տնտեսության հիմնումը, որը տեսանելի ապագայում կարող է վերածվել ուսանողական իսկական ավանի, որտեղ իրենց աշխատանքային գործունեությունը

կկարողանան ծավալել նաեւ այլ բուհերի ուսանողները: ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացվող այս ծրագրի արդյունքում Արցախի տնտեսությունը շատ շուտով հուսալի պատվար, նեցուկ կունենա:

Ի դեպ, աշխատանքային, պրակտիկ գործունեության մասին: ՀԱԱՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ **Արշալույս Թարվերդյանը** համոզված է, որ ագրարային կրթության առանձնահատկությունն այն է, որ տեսականի հետ շատ կարեւոր, անփոխարինելի նշանակություն ունեն գործնական գիտելիքները: Ուստի, այս բուհում սովորողները պետք է ունենան աշխատանքային կիսամյակ, որ հասցնեն ճաշակել, զգալ մասնագիտության առանձնահատկությունները, ինչու չէ, նաեւ դժվարությունները: Իսկ ճաշակելուց հետո... սերն անխուսափելի է: Սերը՝ ընտրած մասնագիտության հանդեպ: Ասել է, թե ուսումնական գրաֆիկն էլ պետք է լինի քիչ այլ կերպ՝ սկզբում ճաշակել, հետո սովորել ու սիրել սխեմայով: Սա շատ ընդունված ու տարածված պրակտիկա է աշխարհում: Արդարացվա՛ծ պրակտիկա:

Անցած տարին ամփոփելիս, անշուշտ, չպետք է մոռանալ, որ ՀԱԱՀ-ը ավանդաբար միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման բարի ավանդույթներ ունի: Տարիներով փորձարկված ու ամրակայված գործընկեր-համալսարանների լայն աշխարհագրություն, որոնք Երեւանի բուհը համարում են համագործակցության համար հուսալի, ցանկալի: Համագործակցության եւրոպական, հետխորհրդային, ամերիկյան հասցեների թվում անցյալ տարի ավելացավ եւս մեկը՝ Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտ եւ պետական համալսարանը:

ՀԱԱՀ-ում վերջին տարիներին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում որակի ներքին վերահսկմանը՝ խիստ, պահանջկոտ, պատվախնդիր վերաբերմունքը աշխատանքի հանդեպ յուրաքանչյուրի գործն է: Միայն այդ ճանապարհով հնարավոր կլինի պատրաստել աշխատաշուկայում մրցունակ կադրեր: Իսկ Ագրարայինի շրջանավարտները, անկասկած, պահանջված են: Այդ են վկայում վիճակագրական տվյալները, որոնց շարժին աչալուրջ հետեւում են բուհում:

Հոգաբարձուների խորհուրդը որոշեց եւ ամրագրեց, որ ուսման վարձավճարի փոփոխություն եկող ուսումնական տարում չի լինի, իսկ աշխատավարձերը կբարձրացվեն տասը տոկոսով:

Անի ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Ուշագրավ նախաձեռնություն

Գրական նոր ժողովածուի ծնունդը

Օքրո Օքրոյանի անվան *«Աստված սեր է»* գրական հիմնադրամի հովանավորությամբ լույս է տեսել *«Չորեքշաբթի Ա.»* գրական ժողովածուն, որ ամփոփում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի *«Չորեքշաբթի»* գրական ակումբի ստեղծագործական առաջին հունձը:

Գրական նոր ակումբը ստեղծվել է 2013 թվականի մարտին. հիմնադիրն է Արցախյան պատերազմի մասնակից, պահեստի փոխգնդապետ, համալսարանի գիտական գրադարանի տնօրեն **Տիգրան Պետրոսյանցը**: Սկզբնական շրջանում ակումբի անդամներ են դարձել ՀՊՄՀ ստեղծագործող ուսանողներն ու աշխատակիցները, սակայն կարճ ժամանակ անց նրան անդամագրվել է ստեղծագործող երիտասարդության մի պատկառելի փաղանգ՝ այլ բուհերից եւ վարժարաններից:

Ինչո՞վ է առանձնանում *«Չորեքշաբթի Ա.»* գրական ժողովածուն: Այն իր գրական նավի վրա վերցրել է խիզախ բանաստեղծների եւ արձակագիրների, ովքեր չեն վախենում փոթորկահույզ ծովերից եւ կարողանում են մտավորականի առաքելությամբ ասել բանաստեղծի ու արձակագրի անվրեպ խոսքը, գեղարվեստորեն մատուցել իրենց ապրումները, զգայական աշխարհի ելեւէջները պատանեկան սիրո, բնության զարթոնքի, երազանքի, Հայաստան աշխարհի, Արցախյան հերոսամարտի, հայրենյաց նահատակների, հայ զինվորի սխրանքի ու հայրենասիրության մասին:

Ժողովածուի առանցքով անցնում են Արարատի, Նեմրութի, Անիի վսեմական հիշատակները, որոնց ոգեկոչումը նոր լիցք է հաղորդում պատերազմի մերօրյա հերոսներին.

Այստեղ դարերը քարացել են,
ժամանակը կանգ է առել
այստեղ,
Կոմագենե երկիրն Հայոց
Իր Երվանդյան զարմով,
Արքաներով,
Ժողովրդով հայոց
Այստեղ պատմություն է
կերտել …

(«Նեմրութ», Տ.Պետրոսյանց):

Ժողովածուի տարբեր էջերից հառնում են զգացական պաթոսով գողտրիկ բանաստեղծություններ, որոնց հեղինակներն ի լուր ամենքի ազդարարում են՝ *«հավաքում եմ երկրիս գանձերը»* (Ա.Խաչատրյան), *«ուզում եմ սիրել ոչ թե երկրի վրա, այլ երկնային երազներում»* (Ն.Աբովյան), *«եկեղեցում մնալով մենակ՝ քո առաջ, Աստված, խոստովանում եմ»* (Մ.Թադեւոսյան), *«գնում եմ թափառող հովի միայնության հետ… հուշերի միջով, վայրկյանի միջով, մերժելով դարը…»* (Դ.Բելլ), *«մեզ այրեցինք ողջ ճանապարհին այս պահի համար»* (Ս.Հովհաննիսյան), *«կզգամ հոգուս մեջ ցավերը քո խոր, թե տխուր լինես ցավով անամոք»* (Ք.Հովհաննիսյան), *«անբեմ կանգնել եմ հոծ ամբոխի մեջ, քարոզչի դեր եմ ստանձնել ցմահ»* (Է.Միրզոյան), *«սպասում եմ վաղուց այդ օրվան, որ հայոց քաղաքներն այդ օրը կպարեն բերդը նահրյան»* (Տ.Պիճոյան), *«սիրո փշրանք-հուշերի փոքր սրվակը շուռ տվեցի հոսող առվում»* (Ա.Վիրաբյան), *«մի անուն կա, որ տառերից էլ եմ թթվածին ստանում»* (Վ.Պետրոսյան):

Ժողովածուում առանձնակի շերտ են կազմում հայոց բանակին, հայ զինվորին եւ Արցախին նվիրված ստեղծագործությունները՝ արձակ թե չափածո: Ա.Մարգարյանի *«Հայոց բանակ»* բանաստեղծությունը խորհրդանիշների շքահանդես է բացում. ազատագրված Շուշի, Մարտակերտ, Անի, Տիգրանակերտ, Մուսա լեռ, Վանա լիճ, Առաքելոց վանք, Սասնա Դավիթ, Տիգրան Մեծ, Անդրանիկ, ապա հնչում է բանաստեղծի փափագը. *«Փոքր Միհրին հանենք փակ դռնից»:* Ուրախալի եւ ողջունելի է այն հանգամանքը, որ երիտասարդ սերունդն առանձնահատուկ խանդաղատանքով է լցված հայ զինվորի նկատմամբ: Թեման յուրահատուկ ապրումներով են վրձնել բանաստեղծներ Գ.Հարությունյանը (*«Բարեւ, զինվորական»*), Մ.Բաղալյանը (*«Սպարապետ Նժդեհի վերադարձը»*) չափածո գործերում եւ արձակագիրներ Հ.Պետրոսյանցը (*«Վերջին նամակը»*), Ա.Միքայելյանը (*«Նամակ զինվորին»*) պատմվածքներում: Հայրենասիրության համատեքստում առանձնակի հնչեղություն է ստանում Արցախ աշխարհը, որի բանաստեղծական կերպավորմանը յուրահատուկ երանգներ են հաղորդել

Վ.Հայրապետյանը եւ Հրաչյան:

Ժողովածուում թեեւ գերակշռում են չափածո գործերը, սակայն արձակի շրջանակներում հեղինակներն առավել ազատորեն եւ անկաշկանդ են իրենց ապրումներն ու խոհերը բանաստեղծորեն մարմնավորել. խոհական այդպիսի գործեր են Ն.Մկրտչյանի *(«Քեզնից հետո»)*, Ն.Բաղալյանի (*«Խճանկար»*), Մ.Պետրոսյանի (*«Ամեն ինչ փոխվեց»*) ստեղծագործությունները:

Թերթելով գրական այս ժողովածուն՝ համոզվում ես, որ նոր սերունդը կարծես գտել է բանաստեղծության իր հորիզոնը, գեղարվեստական խոսքի իր սեփական ոճը եւ այդպիսով հարստացնում է ազգային գեղարվեստական մտածողության ներկապնակը: Հիշատակության արժանի են Տ.Արշակյանի (*«Մեկ... երկու… երեք»*), Ի.Բաղալյանի (*«Աշխարհ, դու հային լավ չես ճանաչում»*), Ն.Բաղդասարյանի (*«Սիրտ իմ»*), Ս.Գրիգորյանի (*«Քեզ»*), Վ.Խալաֆյանի (*«Երանգներ՝ հույզերով խտացված»*), Ա.Կարեյանի (*«Ինքս ինձ»*), Ս.Մարգարյանի (*«Ուղերձ սրտին»*) բանաստեղծությունները: Վկայենք Հայասեր Հովսեփյանի բանաստեղծական ներշնչանքից մի պատառիկ, որ հստակ պատկերացում կարող է տալ նոր սերնդի պոետական ընկալումների մասին.

Առուն սրինգն առել շուրթերին
սարից իջնում է ցած
Քամին թեւի տակ ծիծեռնակի
ծլվլոցներ է բերում
Թողեք՝
բացվեն սրտիս վարդերը
ու կտեսնեք՝
ինչ գեղեցիկ է իմ գարունը…

«Չորեքշաբթի» գրական ժողովածուն մի հարկի տակ է հավաքել երիտասարդ ստեղծագործողների մի ամբողջ աստղաբույլ: Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանում ստեղծվելով որպես գրական ստուդիա՝ *«Չորեքշաբթին»* դարձավ նաեւ նկարիչների ու երաժիշտների հանդիպման վայր եւ աստիճանաբար վերածվեց գրական ակումբի: Սույն ժողովածուն գրական ակումբի առաջին արգասիքն է, որ խոստումնալից սկիզբ է ազդարարում: Ուրեմն՝ բարի երթ մաղթենք *«Չորեքշաբթի Ա.»* գրական ժողովածուին, բարի երթ մաղթենք *«Չորեքշաբթի»* գրական ակումբի անդամներին իրենց ոգորումների ճանապարհին:

Լալիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
պրոֆեսոր

Հայտարարություն

Գնահատման եւ թեստավորման կենտրոնը սույն թվականի **փետրվարի 1-ից** սկսում է Հայաստանի Հանրապետությունում միջնակարգ հանրակրթական ծրագիր իրականացնող հաստատությունների (անկախ կազմակերպաիրավական ձեւից) 2014-2015 ուստարվա շրջանավարտների *«Հայոց լեզու եւ հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Օտար լեզու»* (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսաց լեզու, իսպաներեն, պարսկերեն, իտալերեն), *«Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Ստեղծագործական աշխատանք»* (շարադրություն) առարկաներից պետական ավարտական, միասնական եւ կենտրոնացված (բանավոր) քննությունների (2015 թվականի բուհերի ընդունելության) կազմակերպման գործընթացը:

Միասնական եւ կենտրոնացված քննություններին մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

2014-2015 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտը լրացնում են իրենց ուսումնական հաստատությունում, նախորդ տարիների շրջանավարտները՝ իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված ուսումնական հաստատությունում, որի մասին տեղեկություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել փաստացի բնակության վայրի մարզային (Երեւանի քաղաքապետարանի) կրթության վարչություն:

Միասնական եւ կենտրոնացված քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

• 3x4 չափի լուսանկար՝ էլեկտրոնային տարբերակը,
• անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը,
*• «**ՎՏԲ Հայաստան բանկ**»-ում Գնահատման եւ թեստավորման կենտրոնի **160481037341** հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել **1500** (հազար հինգ հարյուր) դրամ եւ վճարի անդորրագիրը կցել դիմում-հայտին:*

Միասնական եւ կենտրոնացված քննությունների վճարից ազատվում են հետեւյալ դիմորդները՝

• պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրված անձինք,
• 1-ին եւ 2-րդ խմբերի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
• ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
• առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքույկի պատճենը, հաշմանդամության տեղեկանքի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության եւ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Դիմում-հայտերի ընդունման վերջին ժամկետը 2015 թվականի մարտի 15-ն է:

Ցանկ

նախորդ տարիների շրջանավարտների դիմում-հայտերն ընդունող ուսումնական հաստատությունների

Նախորդ տարիների այն շրջանավարտները, որոնք բուհ ընդունվելու համար *«Հայոց լեզու եւ հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ռուսաց լեզու», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Օտար լեզու»* (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն, իտալերեն), *«Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Ստեղծագործական աշխատանք»* (շարադրություն) առարկաներից հանձնելու են միասնական եւ (կամ) կենտրոնացված քննություններ, դիմում-հայտը լրացնում են իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված հետեւյալ ուսումնական հաստատություններում.

Երեւան	Թիվ 65 ավագ դպրոց (Շենգավիթ)
	Թիվ 43 ավագ դպրոց (Էրեբունի, Նուբարաշեն)
	Թիվ 114 ավագ դպրոց (Կենտրոն, Նորք-Մարաշ)
	Թիվ 54 ավագ դպրոց (Արաբկիր)
	Թիվ 190 ավագ դպրոց (Մալաթիա-Սեբաստիա)
	Թիվ 62 ավագ դպրոց (Նոր Նորք)
	Թիվ 127 ավագ դպրոց (Քանաքեռ-Զեյթուն)
	Թիվ 118 ավագ դպրոց (Աջափնյակ, Դավթաշեն)
	Թիվ 170 ավագ դպրոց (Ավան, Առինջ)
Կոտայքի մարզ	Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց
	Աբովյանի թիվ 6 ավագ դպրոց
	Եղվարդի ավագ դպրոց
	Նոր Հաճնի ավագ դպրոց
	Բյուրեղավանի ավագ դպրոց
	Չարենցավանի ավագ դպրոց
Գեղարքունիքի մարզ	Գավառի ավագ դպրոց
	Սեւանի ավագ դպրոց
	Մարտունու ավագ դպրոց
	Վարդենիսի ավագ դպրոց
	Ճամբարակի ավագ դպրոց
Արագածոտնի մարզ	Աշտարակի ավագ դպրոց
	Թալինի ավագ դպրոց
	Ապարանի ավագ դպրոց
	Ծաղկահովիտի միջնակարգ դպրոց

Վայոց ձորի մարզ	Եղեգնաձորի ավագ դպրոց
	Ջերմուկի ավագ դպրոց
	Վայքի ավագ դպրոց
Արարատի մարզ	Արտաշատի ավագ դպրոց
	Արարատի ավագ դպրոց
	Մասիսի ավագ դպրոց
Սյունիքի մարզ	Կապանի թիվ 9 ավագ դպրոց
	Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոց
	Գորիսի թիվ 4 ավագ դպրոց
	Սիսիանի ավագ դպրոց
Լոռու մարզ	Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց
	Ալավերդու թիվ 2 հիմնական դպրոց
	Սպիտակի ավագ դպրոց
	Ստեփանավանի ավագ դպրոց
	Տաշիրի ավագ դպրոց
Շիրակի մարզ	Գյումրու թիվ 3 ավագ դպրոց (Գյումրի, Ախուրյան)
	Արթիկի թիվ 3 ավագ դպրոց
	Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց
	Աշոցքի միջնակարգ դպրոց
	Ամասիայի միջնակարգ դպրոց
Արմավիրի մարզ	Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց
	Վաղարշապատի թիվ 2 ավագ դպրոց
	Մյասնիկյան գյուղի միջնակարգ դպրոց
Տավուշի մարզ	Իջեւանի ավագ դպրոց
	Դիլիջանի ավագ դպրոց
	Նոյեմբերյանի ավագ դպրոց
	Բերդի ավագ դպրոց

«Գնահատման եւ թեստավորման կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն

«Եռաբլուր» պանթեոն



«Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ»:

Աւետարան ըստ Յովհաննու, գլուխ ԺԲ, 24-25

Դարերի խորքից եկող անքննելի ճշմարտություն է՝ հայենիքը սրբություն է, հայրենիքի պաշտպանությունն ու ազատագրումը՝սուրբ գործ: Ցավոք, այս սուրբ գործը զոհեր է պահանջում, որոնց հիշատակը վառ պահելու եւ մյուս հանգուցյալներից առանձնացնելու համար ժողովուրդները առանձին հանգստարաններ են ստեղծել: Մեզ՝ հայերիս համար այդպիսի նվիրական վայր է *«Եռաբլուր»* պանթեոնը:

Արցախյան ազատամարտի մասնակից, պատմական գիտությունների թեկնածու, Հայրենակցական միությունների Միաբանության գործադիր տնօրեն Անդրանիկ Արշակյանը, ով Արցախյան ազատամարտին նվիրված գրքերի, տասնյակ գիտական հոդվածների, արցախյան հիմնահարցին առնչվող բազմաթիվ հրապարակումների հեղինակ է, վկայում է, որ հայ-ադրբեջանական բախումների մեր առաջին զոհերը՝մոտ մեկ տասնյակ, հողին հանձնվեցին Նորքի առաջին զանգվածում գտնվող պուրակում: **Մովսես Գորգիսյանի, Սամվել Գեւորգյանի, Էդուարդ Մարկոսյանի, Մուշեղ Մխոյանի, Երվանդ Սաղումյանի** աճյուններն ամփոփվեցին մեր ժողովրդի համար սրբատեղի դարձած մեկ այլ վայրում՝ Ծիծեռնակաբերդում: Բազմաթիվ զոհվածներ թաղվեցին ընտանեկան գերեզմանատներում. առաջացավ հայրենիքի համար նահատակվածների գերեզմանները մեկտեղելու խնդիրը: Վայրի ընտրության հարցի շուրջ տարբեր կարծիքներ կային:

Առաջին մեծ խումբը, որ իր վերջին հանգիստը գտավ Եռաբլուրում, 1990 թ. մայիսի 27-ին Երեւանի կայարանամերձ հրապարակում խորհրդային զորքերի հետ բախման ժամանակ զոհված շուրջ երկու տասնյակ տղաներն էին: Այսպես ստեղծվեց հայոց նորագույն հաղթանակը կերտած քաջերի եղբայրական պանթեոնը. անցյալ դարի 90-ականների առաջին կեսից մեր բառապաշարում ավելացավ նոր բառ-տեղանուն՝ *«Եռաբլուր»* պանթեոն: Պանթեոնի տնօրեն, արցախյան ազատագրական պատերազմի մասնակից գնդապետ Սուրեն Խաչատրյանի դիպուկ բնորոշմամբ. *«Հայոց մեծ եղեռնի հուշահամալիրի՝ Ծիծեռնակաբերդի հարեւանությամբ երեք բլուրների լանջերին հուղարկավորվեցին առաջին նվիրյալները, եւ տեղանքը սրբացավ, կոչվեց Ազատամարտի հերոս նահատակների Եռաբլուր-Պանթեոն»:*

Եռաբլուրը ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության հուշահամալիր է՝ պանթեոն, որտեղ ամփոփված են Արցախյան պատերազմում եւ զինադադարից հետո զոհված կամ մահացած ազատամարտիկների եւ զինծառայողների աճյունները: Գերեզմանատան կարգավիճակը հաստատվել է 1992թ. մայիսի 26-ի ՀՀ կառավարության որոշմամբ:

Ուխտատեղի դարձած հուշահամալիրը գտնվում է հայոց 12-րդ մայրաքաղաք Երեւանի արեւմտյան մասում՝ թուրքական գերության մեջ մնացած Մալաթիա եւ Սեբաստիա քաղաքների անունները կրող համայնքում՝ Երեւան-Վաղարշապատ ավտոմայրուղուց աջ՝ Եռաբլուր բարձունքում (բարձրությունը՝ 951 մ). տարածքը՝ 19, 22 հեկտար:

Ներկայումս Եռաբլուրում ամփոփված են իրենց կյանքը մեր հայրենքին նվիրաբերած շուրջ 750, այդ թվում՝ այլազգի (եզդի, ռուս, ուկրաինացի եւ այլն) ազատամարտիկների աճյուններ:

Եռաբլուրում իրենց վերջին հանգիստն են գտել զորավար **Անդրանիկ Օզանյանը, Սոսե մայրիկը, Մոնթե Մելքոնյանը** (Հայաստանի ազգային հերոս), **Վազգեն Սարգսյանը** (Հայաստանի ազգային հերոս):

Պանթեոնում հավերժական քնով քնած են մեր նշանավոր ազատամարտիկներից **Ջիվան Աբրահամյանը** (Հայաստանի ազգային հերոս), **Վարդան Ստեփանյանը** (Դուշման), **Շահեն Մեղրյանը, Վահան Զատիկյանը, Սմբատ Այվազյանը** եւ ուրիշներ. բոլորին թվել հնարավոր չէ, բոլորն էլ հավերժի ճամփորդ են:

Գերեզմանատան տեղանքը անհարթ է: Ա. Արշակյանի խոսքով՝ տեղանքը այդպես է թողնվել մտածված՝ տղաների՝ լեռներում զոհվելու խորհուրդն արտահայտելու համար: Նշենք մի կարեւոր հանգամանք՝ ի սկզբանե որոշվեց զոհվածների կուսակցական պատկանելությունը չնշել: Որոշվեց նաեւ շիրմաքարերի տեսակը, տեսքն ու ձեւը. բոլոր շիրմաքարերը պետք է լինեն բազալտե:

Գերեզմանատան կարգավիճակը հաստատելուց հետո դրվեց պանթեոնին ճարտարապետական լուծումներ տալու խնդիրը. հատակագծի եւ ճարտարապետական լուծումների հեղինակները Ասլան Մխիթարյանն ու իր արվեստանոցի ճարտարապետներն են:

Հայոց հերոսների հանգստարան տանող ճանապարհը սկսվում է հաղթական կամարով՝ կառուցված 1997թ.՝ ճարտարապետ Ասլան Մխիթարյանի նախագծով: Հաղթակամարի մասն են կազմում հավերժության խորհրդանիշը, բերքի տակ կքած նռենու ճյուղերը, երեք մեծ խաչերն ու երեք աղբյուրները, որոնք խորհրդանշում են մեր ժողովրդի ստեղծագործ ոգին, կենսունակությունն ու հավատը: Հուշարձանի սպիտակ գույնը խորհրդանշում է մեր զոհված մարտիկների երիտասարդությունն ու նրանց գործի հավերժությունը: Հաղթակամարին փորագրված դափնու տերեւները նրանց փառքի ու անմահության խորհուրդն ունեն:

Հուշահամալիրի ճարտապետական հորինվածքի մեջ են մտնում մուտքի սյուները: Դրանք կառուցվել են 1995թ. ճարտարապետը դարձյալ Ասլան Մխիթարյանն է: Մուտքի աջ կողմի սյան վրա 5-րդ դարի պատմիչ **Եղիշեի** խոսքերն են. *«Մահ իմացյալ անմահություն է»,* իսկ ձախ կողմի սյան վրա՝ մեկ այլ մեծ հայի՝ **Գարեգին Նժդեհի** խոսքերը. *«Ննջեք ուրեմն սուրբ շիրիմների տակ, քանզի արթուն եք մեր ոգիներում»:*

Մուտքի աջ մասում թանգարանի շենքն է, որի շինարարությունը դեռեւս ավարտին չի հասել:

Եռաբլուրի նման վայրը չէր կարող լինել առանց հոգեւոր ներկայության. հերոսների ննջավայրում՝ մուտքի սյուների հարեւանությամբ, հայոց կապույտ երկինք է խոյանում Սուրբ Վարդանանց եկեղեցին: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1994թ., օծումը՝ 1999թ. սեպտեմբերին: Կառուցվել է ամերիկահայ բարերար ամուսիններ Հրաչ եւ Վիկտորյա Ոսկանյանների կողմից: Ըստ որոշ մեկնաբանությունների՝ եկեղեցին ունի չկրակված փամփուշտի կամ դեպի երկինք ուղղված հրթիռի տեսք, որն իր հետ տիեզերք է տանում Եռաբլուր պանթեոնում ննջող մեր հերոս-նահատակների երազներն ու պատգամները: Մեկ այլ կարծիքի համաձայն՝եկեղեցու գմբեթի ճարտարապետական հորինվածքը թրի խորհուրդն ունի: Սուրբ Վարդանանց եկեղեցում կատարվում են Հայ առաքելական եկեղեցու կանոնիկ ծեսերը:

Եկեղեցու մոտ է գտնվում *«Բերդպար»* հուշարձանը՝ կառուցված 1999թ.: Խորհրդանշում է Վազգեն Սարգսյանի հետեւյալ խոսքերը. *«21-րդ դարը մերն է լինելու»:* Ուս ուսի տեղադրված են 21 բազալտե սալաքարեր: Առջեւի հրապարակում վեր խոյացող սյան վրա հայոց զինված ուժերի զինանշանն է:

շարունակությունը՝ էջ 13

«Եռաբլուր» պանթեոն

սկիզբը՝ էջ 12

Ազգային գերեզմանատան տարածքում՝ մուտքի մոտ՝ թանգարանի անավարտ շենքի հարեւանությամբ է գտնվում *«ԱՍԱԼԱ»* (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) հուշահամալիրը: Կառուցվել է 2000 թ. *«Նեմեսիս»* կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից: Տուֆակերտ կառույցի վերին մասում քանդակված է զանգ: Դեպի այդ զանգը փորագրված ինքնաձիգները Հայ դատը արթուն պահելու խորհուրդն ունեն: Ներքեւի մասում ծովից ծով Հայաստանի քարտեզն է, որը նաեւ ԱՍԱԼԱ կազմակերպության զինանշանն է: Հուշարձանի առջեւ տեղադրված են 39 մարտիկների տապանաքարերը:

Պանթեոնում հառնող հուշարձաններից է Անհայտ կորած ազատամարտիկների հուշարձանը, որ կառուցվել է 2003թ.՝ խաչքարի տեսքով՝ ԱՍԱԼԱ-ի հուշահամալիրից մի քանի քայլ հեռու: Խաչերից մեկի թեւին քանդակված է Նոյի աղավնին եւ հայոց եռագույնը, ներքեւում գրված է. *«Անունդ անհայտ, սխրանքդ անմահ»:*

Այս հուշարձանին կից 2004 թվականին կանգնեցվել է զինադադարի ժամանակ զոհված զինվորների հուշաքարը, որին պատկերված դափնու տերեւները խորհրդանշում են ծաղկուն, երիտասարդ կյանքի հավերժությունը:

Եռաբլուրի եղբայրական գերեզմանոցում է տեղադրված Արծվաշենում զոհվածների հուշարձանը. կառուցվել է 1994թ.: Չորս մետր բարձրությամբ հուշարձանի վրա գրված է. *«Արծվաշենում զոհված 12 հայորդիների հիշտակին»*, իսկ տապանաքարի վրա նահատակ զինծառայողների անուններն են:

Համալիրը պահպանում եւ հսկում է գերեզմանատան զինվորական պահակային ծառայությունը, որը մեծ հոգածությամբ է վերաբերվում յուրաքանչյուր շիրմաքարի, հուշարձանի, ծառի ու թփի:

Պանթեոնի տնօրեն գնդապետ Սուրեն Խաչատրյանի եւ մի խումբ նվիրյալների կողմից հրատարակվել է *«Եռաբլուր»* գիրքը՝ երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: 2013թ. այն վերահրատարակվեց Սիդնեյում՝ քաղաքի հայ համայնքի կողմից, տեղի հայկական եկեղեցու միջնորդությամբ:

1995-ից գործում է *««Եռաբլուր» զինվորական պանթեոնի զոհված ազատամարտիկների եւ զինվորների ծնողների»* կոմիտեն: Մենք պետք է գլուխ խոնարհենք այդ ծնողների առաջ, որ ազգին այդպիսի զավակներ են պարգեւել:

Անդրանիկ Արշակյանը հիշում է, որ պանթեոնի հարդարման, ձեւավորման աշխատանքները՝ ծառատունկ, կանաչապատում եւ այլն, սկզբնական շրջանում, չնայած տեխնիկայի առկայությանը, իրենք՝ազատամարտիկները, կատարում էին ձեռքով՝ ի նշան խոնարհումի զոհված ընկերների հիշատակի առջեւ: *«Երանի նրանց, ովքեր ճանաչել, հաղորդակցվել կամ շփվել են մեր անմահացած Տղերքի հետ, ու նաեւ նրանց երանի, ովքեր չեն ճանաչել, չեն շփվել եւ այդպես ծանր չեն տանում կորստի ցավը,*- գրում է Ա.Արշակյանը իր հեղինակած *«Մահ չիմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն»* գրքում:- *Նրանցից յուրաքանչյուրի կորստի հետ մենք աղքատացել ենք ու կողոպտվել, փոխարենը՝ այդքան հարստացրել հողը, ուր ամփոփել ենք նրանց»:*

«Կանցնեն տարիներ…,- ասում է գնդապետ Ս.Խաչատրյանը,- *«Եռաբլուր» պանթեոնում ամեն մի հերոս կունենա իր ծառը, իր ապրող հիշողությունը, եւ այդ ծառերի միասնական անտառը կնմանվի դար ու դարեր առաջ Մասիսի փեշերին սոսափող Սոսյաց անտառին: Եվ ժողովրդի կողմից սրբացված Սոսյաց անտառի սոսափն ու ձայնը նորից կլսենք, կունկնդրենք դյուցազուն-հերոսներին զով անող մեր նոր՝Եռաբլուրի լանջերին սրբացած անտառում»:*

Այսօր Հայաստանի Հանրապետության պետական տոները, միջոցառումները հիմնականում սկսվում են Եռաբլուր այցելությունից: Երկրի աշխարհիկ ու հոգեւոր ղեկավարները ծաղիկներ ու ծաղկեպսակներ են դնում Զորավար Անդրանիկի, Վազգեն Սարգսյանի շիրիմներին, *«Բերդպար»* հուշաքարին:

